

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՔԻՈՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ (1 Հոկտեմբեր 2000 - 31 Դեկտեմբեր 2001)

Հայկազեան Հայագիտական Հանդեսը իր այս հատորով կը սկսի նոր բաժին մը, ուր պիտի ներկայացուին համալսարանի Հայագիտական Ամբիոնի տարեկան հրապարակային գործունեութիւնները:

Սոյն՝ առաջին ակնարկը բացառաբար կ'ընդգրկէ 15 ամսուան ժամանակամիջոց մը, կարենալ ամբողջութեամբ ներառելու Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած դասախօսութիւններու շարքը: Հանդեսի խմբագրութիւնը, սոյն ակնարկը կը նկատէ բնական շարունակութիւնը նախորդ հատորին մէջ լոյս տեսած ամբիոնի պատմութեան նուիրուած համառօտ ուրուագիծին:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀՈՉԱԿԱՆ 1700ԱՄԵԱԿԻ ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸԱՐՔԸ

Հայագիտական Ամբիոնը կազմակերպած էր Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած վեց դասախօսութիւններ, որոնք բոլորն ալ տեղի ունեցան համալսարանի հանդիսարանին մէջ:

Ա.

«Արարչագործութիւնը Հայ Մեկնողական Գրականութեան Մէջ»  
դասախօս՝ Հոգեշնորհ Շահան Ծայրագոյն Վարդապետ Սարգիսեան  
9 Նոյեմբեր 2000

Սոյն շարքին առաջին դասախօսութիւնը նուիրուած էր տիեզերքի եւ մարդկութեան արարչութեան հարցին նուիրուած հայ մատենագիրներու տեսակետերուն ու մեկնութիւններուն: Դասախօսն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Չարեհեան Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգեշ. Շահան Ծ. Վրդ. Սարգիսեանը:

Երեկոն սկսաւ համալսարանի նախագահ Վեր. Ժան Խանճեանի բացման խօսքով, ուր ան անդրադարձաւ հայոց պատմութեան մէջ քրիստոնէութեան խաղաղացած առանցքային դերին եւ Հայկազեան Համալսարանի հայկական եւ քրիստոնէական առաքելութեան:

Արարչագործութեան վերաբերեալ բազմաթիւ մեկնութիւններու կարելի է հանդիպիլ հայ միջնադարեան գրականութեան բոլոր սեռերուն մէջ, ըսաւ Հոգեշ. Հայր Սուրբը: Այդ մասին կարելի է գտնել նախաքրիստոնէական եւ քրիստոնէական, յունական կամ ասորական փիլիսոփայական ճառերու քարգմանութիւններուն, ինչպէս նաեւ հայ ինքնագիր գրականութեան մէջ՝ Աստուածաշնչեան մեկնութիւններու, գիտական (Անանիա Շիրակացի) եւ պատմական (Ասողիկ) երկերու, քարոզներու (Մամբրէ Վերծանող, Գրիգոր Տաթեւացի). բանաստեղծութեան (Գրիգոր Նարեկացի). ծիսական երկերու (*Շարակնոց, Մաշտոց*), եւն.: Արարչագործութիւնը հետաքրքրած է նաեւ բոլոր ժամանակներու մանրանկարիչներն ու Ախթամարի Ս. Խաչ Եկեղեցոյ բարձրաքանդակներու հեղինակները:

Դասախօսը յատկապէս կեդրոնացաւ Ե.-Չ. դարերու կարգ մը երկերու վրայ, ինչպէս Գրիգոր Լուսաւորիչի կամ Մեսրոպ Մաշտոցի վերագրուող *Յանախապատում* գիրքը, Ագաթանգեղոսի *Պատմութիւն Հայոցին* մաս համարուող *Ս. Գրիգորի Վարդապետութիւնը*, Եզնիկի *Եղծ Աղանդոցը*, *Արարածոց Մեկնութիւնը*:

Աւելի ուշ շրջանի հեղինակներէն յիշուեցան՝ Չաքարիա Կաթողիկոսը (Թ. դար), Ներսէս Շնորհալին (ԺԱ. դար), Յովհաննէս Սարկաւազը (ԺԲ. դար), Յովհաննէս Երզնկացին, Առաքել Սիւնեցին, Յովհաննէս Թլկուրանցին, Յովհաննէս Որոտնեցին (ԺԴ. դար) եւ Գրիգոր Խլաքեցին (ԺԵ. դար):

Ըստ դասախօսին, արարչագործութեան վերաբերեալ այս նիւթերուն մեծ մասը տակաւին անտիպ է, եւ միայն փոքր մաս մը արժանացած է գիտական վերլուծութեան: Միւս կողմէ, յունական եւ ասորական փիլիսոփայական երկերու բազմաթիւ քարգմանութիւններ ուսումնասիրուած են ոչ-հայ մասնագէտներու կողմէ:

Հայր Շահան մանրամասօրէն անդրադարձաւ ԺԳ. դարու հեղինակ Վարդան Արեւելցիին: Հնգամատեանին նուիրուած անոր ընդարձակ աշխատանքը, նախորդ դարերու կորսուած երկերէն բազմաթիւ մէջբերումներ կը ներառէ եւ մեծ ազդեցութիւն ունեցած է միջնադարեան հայ ստածողութեան վրայ: Սոյն մեկնողական երկը պահպանուած է առնուազն 90 ձեռագիրներով:

Բ.

«Շարականները՝ Խտացած Արտայայտութիւն Հայ Մշակոյթի»  
դասախօս՝ Գրիգոր Շահինեան  
11 Յունուար 2001

1700ամեակին նուիրուած դասախօսական շարքին երկրորդը նուիրուած էր միջնադարու հայ շարականներուն: Անոնց մասին դասախօսեց լիբանանահայ ծանօթ մանկավարժ եւ գրաքննադատ, Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմատրումի Հիմնարկի անօրէն Գրիգոր Շահինեան:

Ըստ Շահինեանի, շարականները հայ քրիստոնէական եւ ազգային մշակոյթի եզակի գանձարանն են: Շարականներ գրուած են գիրերու գիտէն անմիջապէս յետոյ՝ քարգմանչական աշխատանքներուն զուգընթաց: Արդէն ընդունուած կարծիք է, թէ Մեսրոպ Մաշտոց անձամբ հեղինակած է մօտաւորապէս 130 շարականներ, իսկ Սահակ Պարթեւ Կաթողիկոս՝ 20:

Պատմահայր Մովսես Խորենացի այ հեղինակած է շարականներ՝ նուիրում Աստուածածնին եւ այլ Աստուածաշնչեան նիւթերու:

Շարականները յարաբերաբար կարճ, ծիսական երգեր են, որոնք կ'առնչուին Նոր Կտակարանի նիւթերուն եւ դէմքերուն: Յատկապէս կը փառաբանուին քրիստոնեայ ազգային-եկեղեցական դէմքեր: Շարականները ընդհանրապէս ուսուցողական բնոյթ ունին՝ բարդ աստուածաբանական իրականութիւնները պարզ լեզուով ու բանաստեղծական ոճով բացատրելու նպատակով: Շատ շարականագիրներու անուններ այսօր յայտնի չեն մեզի, բայց կարելի է հաստատօրէն ենթադրել, որ անոնք մեծաւ մասամբ եկեղեցականներ եղած ըլլալու են:

«Շարական» եզրը, ըստ Շահինեանի, շատ հաւանաբար կը ծագի «շարք» բառէն եւ կրնայ նշանակել «շարքի մը պատկանող»: Մակայն, կարգ մը ուսումնասիրողներ, այդ բառը կը ստուգաբանեն իբր եբրայերէնէ կամ ասորերէնէ ծագած եզր մը:

Հայ շարականագրութիւնը կը բաժնուի երեք շրջանի, ըսաւ Շահինեան.-

առաջին՝ Ե.-Չ. դարերը, երբ Աստուածաշնչեան սաղմոսներու ազդեցութիւնը զգալի է, եւ հեղինակները հազուադէպօրէն կը դիմեն տաղաչափութեան:

երկրորդ՝ Է.-ԺԲ. դարերը, երբ տաղաչափութիւնն ու ազգային նիւթերը կը դառնան ուշագրաւ, եւ ի յայտ կու գան մի քանի կին շարականագիրներ:

երրորդ՝ ԺԲ.-ԺԵ. դարեր, երբ կեղրոնական դէմքը Ներսէս Շնորհալի կաթողիկոսն (1166-73) էր, որուն կը վերագրուի մեզի հասած շարականներուն կէտը:

*Շարակնոցը*, որ Հայաստանեայց Եկեղեցոյ կողմէ հաստատուած կանոնական շարականներու հաւաքածոն է, կ'եզրափակուի ԺԵ. դարուն, քէն մինչեւ օրս, շարականներ կը շարունակուին գրուիլ: Աստուածաբանական կամ գեղագիտական պատճառներով *Շարակնոցէն* դուրս մնացած շարականները կը ճանչցուին իբր պարականոն շարականներ:

Շահինեանի վերլուծած որոշ շարականներ, տեղույն վրայ մեկնաբանուեցան Երեւանէն շրջանաւարտ երիտասարդ երգիչ Գեորգ Գարամէթեանի կողմէ:

#### Գ.

«Ս. Ներսէս Շնորհալին՝ Էքիմէնիք Շարժման Ռահվիրայ»  
դասախօս՝ Արհիապատի Պետրոս Արքեպիսկոպոս Միրիաթեան  
15 Մարտ 2001

Երրորդ դասախօսութեան համար հրատարակուած էր Հայկալի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ՝ Արհ. Պետրոս Արք. Միրիաթեան, որ խօսեցաւ հայ-բիւզանդական էքիմէնիք երկխօսութիւն հաստատելու ջանքերուն մէջ ԺԲ. դարու հայոց կաթողիկոս Ս. Ներսէս Շնորհալիի (1102-1173) խաղացած առաջնային դերին մասին:

Հայկազեան Համալսարանի հոգաբարձութեան անդամ՝ Վեր. Փօլ Հայտոսեան ներկայացուց իւր դասախօսը: Միրիաթեան Արքեպիսկոպոս ծնած է Հայկալ, 1948ին: Աստուածաբանական կրթութիւնը ստացած է Չըն-

մառի Հայ Կաթողիկէ Դպրեվանքին մէջ, ապա մեկնած է Հոռոմ, ուր յաճախած է Լեւոնեան Վարժարանն ու Հոռոմի Համալսարանը: Ան վկայուած է նաեւ Հալէպի Համալսարանէն, ուր ուսանած է արաբական գրականութիւն: Միրիաթեան 1990էն ի վեր առաջնորդն է Հալէպի Հայ Կաթողիկէ Թեմին, եւ միաժամանակ գործունեայ աշխատանք կը ծառայէ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի ծիրէն ներս: Իր քարոզներն ու կրօնական յօդուածները հրատարակուած են հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ իտալերէն լեզուներով:



*Արհ. Պետրոս Արք. Միրիաթեան՝ դասախօսութեան ընթացքին*

Միրիաթեան Արքեպիսկոպոս կեդրոնացաւ Շնորհալիի կաթողիկոսութեան տարիներուն հայ եւ բիզանդական եկեղեցիներու յարաբերութիւններուն վրայ: Ան ըսաւ, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան նստավայրը Հոռոմկլայի մէջ՝ շատ յարմար էր, իսկ իշխող քաղաքական մթնոլորտն ալ՝ նպաստաւոր, որ Հայ Եկեղեցին տուեալ ժամանակամիջոցին բարեկամական կապեր մշակէր Հոռոմեական, Բիզանդական եւ Ասորական Եկեղեցիներուն հետ:

Իր խօսքը կառուցելով Հայր Լեւոն Չէրիեանի եւ Ազատ Բոզոյեանի այս առնչութեամբ կատարած ուսումնասիրութիւններուն վրայ, դասախօսը ներկայացուց Շնորհալիի եւ Բիզանդական Եկեղեցոյ ներկայացուցիչներուն միջեւ ընթացած բանակցութիւններուն ժամանակագրական կարգը, 1165էն մինչեւ Շնորհալիի վախճանումը՝ 1173ին: Ան բուարկեց ամենակարեւոր նամակներն ու վաւերաբոլորները, ուր լաւագոյնս կ'արտացոլան Շնորհալիի տեսակետերը էքիմենիք յարաբերութիւններու սկզբունքներուն առնչութեամբ:

Դասախօսութեան յաջորդ եւ ամենակարեւոր մասը, Շնորհալիի որդեգրած այդ սկզբունքներուն համառօտակի ներկայացումն էր: Ըստ անոնց,

որիւ եկեղեցական միութիւն, պէտք է հիմնուած ըլլայ փոխադարձ սիրոյ, աղօթքի եւ խոնարհութեան վրայ: Ան առաջարկած է, որ փոխ-յարաբերութիւնները ընթանան լայնախոնարհութեան, միասնականութեան, համեստութեան եւ հաւասարութեան քրիստոնէական ոգիով, որպէսզի նուազին առկայ տարբերութիւնները: Շնորհալի յայտարարած է, որ կրկին կ'աշխատէր եկեղեցական միութեան համար, եթէ իրեն Աւետարանի Ղազարոսին նման երկրորդ կեանքի մը առիքը տրուէր:

Միրիաթեան Արքեպիսկոպոս ըսաւ, թէ շքանշանի այս օրերուն, Հայ Կաթողիկէ Եկեղեցին, գիտակցաբար թէ անգիտակցաբար, կը հետեւի Շնորհալիի սկզբունքներուն: Ան յիշեց, թէ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը յանուանէ յիշատակած է Շնորհալին Հայաստանի քրիստոնէացւան 1700ամեակի իր շրջաբերականին մէջ: Ինչ որ կը պակսի հիմա, ըստ դասախօսին, հայ երեք յարանումութիւններուն միջեւ երկկողմ կամ եռակողմ բանակցութիւններ սկսելու իսկական փափաքն է:

Ան ընդունեցաւ, սակայն, թէ Հայ Կաթողիկէ Եկեղեցին, այլեւս չունի այն փափաքելի դերը, որ իբր կամուրջ պէտք է ծառայէր Հայ Առաքելական Եկեղեցոյ եւ Տիեզերական Կաթողիկէ Եկեղեցոյ միջեւ: Անիկն, անհկա երբեմն արգելք կը նկատուի, երբ այս երկու մեծ կառոյցները կը ձգտին իրարու հետ ուղղակի կապեր հաստատել: Հայ կաթողիկէները, ինչպէս նաեւ այլ արեւելեան կաթողիկէ եկեղեցիներ, չեն դիտուիր իբր ապագայի համար մոտէկներ: Այնուամենայնիւ անոնք կը գիտակցին իրենց պատմական դերը, որ իր վախճանին պիտի հասնի երբ իրագործուի էքիմենիք միութիւնը:

Դասախօսութեան յաջորդող հարց-պատասխանի բաժինը առաւելաբար կեդրոնացաւ եկեղեցական միութեան խնդրին վրայ, թիւս զասախօսին խօսքերէն: Երոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի դեսպան Պր. Արման Նաւասարդեան, որ ներկայ էր դասախօսութեան: Աւարտին, Արքեպիսկոպոսի Արքեպիսկոպոսը, ընդառաջելով ներկաներու փափաքին, կրկին բուարկեց եկեղեցական միութիւնը իրականացնելու գծով Շնորհալիի որդեգրած սկզբունքները:

Գ.

«Մովսէս Գ. Կաթողիկոս Տաթեւացի.  
Արեւելեան Հայաստանում Հայ Եկեղեցու եւ Մշակոյթի  
Վերածնունդը ԺԷ. Դարում»  
դասախօս՝ Գեորգ Տէր-Վարդանեան  
10 Մայիս 2001

Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Զեռագրագիտութիւն Բաժնի վարիչ Գեորգ Տէր-Վարդանեանի դասախօսութիւնը բուով չորրորդն էր 1700ամեակի շարքին: Այն նուիրուած էր հայոց կաթողիկոս Մովսէս Գ. Տաթեւացիին (1629-1633) եւ յատկապէս նոյն ժամանակամիջոցին պարսկական տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանի մէջ Հայ Եկեղեցոյ եւ մշակոյթի զարթօնքին մէջ ունեցած անոր որոշիչ դերին:

Երեւանի Պետական Համալսարանի Հնագրութեան Ամբիոնի շրջանաւարտ Տէր-Վարդանեան, համարեա իր ամբողջ մասնագիտական գործու-

նեութիւնը ծառայած է Մատենադարանէն ներս: 1995էն 1998 ան տնօրէնը եղած է Հայաստանի Ազգային Գրադարանին: Հեղինակ է շարք մը գիրքերու եւ հարիւրեակ մը յօդուածներու՝ նուիրուած հայկական ձեռագիրներու, պատմութեան եւ մշակոյթին:

Տէր-Վարդանեան ի սկզբանէ նշեց, որ ԺԷ. դարուն Մովսէս Տաթևացիի խաղացած դերին ուսումնասիրութիւնը այսօր, մեծապէս օգտակար կը հանդիսանայ Հայաստանի մէջ Հայ Եկեղեցիին, մանաւանդ երբ վերջինս այսօր կը փորձէ վերականգնիլ, խորհրդային իշխանութեան տապալումէն ասդին:

Տաթևացին Հայ Եկեղեցոյ պատմութեան մէջ անտեսուած դէպք մը չէ, ըսաւ դասախօսը: Միջնադարեան մատենագիրներ Առաքել Դարիժեցիի եւ Գրիգոր Դարանաղցիի գործերը հիմնական աղբիւրներն են անոր կենսագրութեան, մինչ ատելի ուշ շրջանի ականաւոր պատմաբաններէն Հայր Միքայէլ Չամչեան, Մաղաքիա Արք. Օրմանեան եւ Հայր Ներսէս Ալիկեան ընդարձակօրէն գրած են իր մասին: Տէր-Վարդանեանի աշխատութիւնը նոյն այս նիւթին առնչութեամբ, պարզապէս կը նպատակադրէ ճշգրտել ու յտակացնել այդ պատմաբաններուն կարգ մը եզրակացութիւնները, անոնց գործերուն լոյս ընծայումէն ետք յայտնաբերուած նոր փաստերու լոյսին տակ: Այս կապակցութեամբ Տէր-Վարդանեան առանձնացուց ԺԷ. դարու հայկական ձեռագիրներու յիշատակարաններուն հրատարակութիւնը՝ երեք մեծածաւալ հատորներով, այդ ժամանակաշրջանին գրուած կարգ մը ժամանակագրութիւններու նոր ի յայտ գալը, ինչպէս նաեւ Վատիկանի արխիւէն փաստաթուղթեր, հրատարակուած Վենետիկի Մխիթարեան հայրերուն կողմէ:

Մովսէս Տաթևացի, ըսաւ Տէր-Վարդանեան, ծնած է 1578ին, Միւնիքի մէջ, երբ Արեւելեան Հայաստանի մտաւորական կեանքը կը գտնուէր տեղատուութեան մէջ: 1592ին ձեռնադրուելով կուսակրօն քահանայ, անմիջապէս փոխադրուեցաւ Արեւմտեան Հայաստանի Ամիոյ քաղաքը, որ այդ ժամանակաշրջանի ուսումնական հագուազիտ կեդրոններէն մին էր: Այնտեղ, Տաթևացի ուսանեցաւ մօտաւորապէս 20 տարի, Սրապիոն Եղեսացիի եւ Գրիգոր Կեսարացիի հսկողութեան ներքոյ: 1612ին ստացաւ Վարդապետի աստիճան:

1613ին ան միացաւ Միւնիքի Հարանց Անապատի միաբանութեան: Տաթևացի եւ իր միաբանակից եղբայրները փորձեցին լաւացնել հայ հոգեւորականութեան վիճակը, որ մեծապէս տուժած էր պարսից Շահ Աբաս Ա.ի բռնագաղթին հետեւանքով: Հարանց Անապատի միաբանները օգնեցին վերաշինելու լքուած վանքերը, հաստատեցին կուսանոցներ, ուր կը գործէին կին գրիչներ:

1620ին Մովսէս Տաթևացի եւ իր աշակերտներէն շատեր փոխադրուեցան Երեսան: Տեղոյն պարսիկ Ամիրզումա խանը, ջանաց օգտուիլ Տաթևացիի կազմակերպչական եւ մտաւորական կարողութիւններէն, վերակենդանացնելու համար այդ շրջանը, որ նշեալ բռնագաղթին հետեւանքով պարպուած էր իր բնակչութենէն: Տիրապետելով սպիտակ մոմեր պատրաստելու գաղտնիքին, Տաթևացի յաջողեցաւ անձնական յարաբերութեան մէջ մտնել նոյնիսկ Շահ Աբասի հետ, որ զինք նշանակեց Ս. Էջմիածնի լուսարարապետ: Տաթևացի՝ օգտուելով իր այս պաշտօնէն, կրցաւ արձատապէս

բարեփոխել Էջմիածնի վանքի պայմանները: Իր այդ ջանքերուն շնորհիւ, ան 1629ին ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ան կրցաւ համոզել նոր Շահը, որ թեթեցնէ կաթողիկոսութեան տուրքերը, եւ ձեռք ձգուած եկամուտները գործածեց կառուցանելու եւ վերականգնելու համար հարիրաւոր եկեղեցիներ: Գրիգոր Գ. Տաթեւացի Կաթողիկոս վախճանեցաւ 1633ին, 55 տարեկան հասակին, գահակալելով հազիւ 4 տարի եւ 4 ամիս:

Իր բազմաթիւ աշակերտները յետագային ակնառու դերեր խաղացին ԺԷ. դարու մշակութային զարթոնքին մէջ, որու ընթացքին գրուած է մեզի հասած հայերէն ձեռագիրներուն ամբողջ թուաքանակին մէկ-երրորդը, եւ զգալի յառաջդիմութիւն ապրած է հայ տպագրութիւնը: Ասոնք եւս Տաթեւացիի ժառանգութեան մասը պէտք է սեպել, եզրակացուց դասախօսը:

Ե.

**«Հայ Աւետարանական Էքիմենիզմի Արմատներն ու Սահմանները»  
դասախօս՝ Վերապատուելի Փօլ Հայտոսեան  
18 Հոկտեմբեր 2001**

Ամառնային արձակուրդէն ետք, 1700ամեակի դասախօսութիւններու շարքը վերսկսաւ Վեր. Փօլ Հայտոսեանի ելոյթով: Վերջինս անդամ է Հայկազեան Համալսարանի հոգաբարձութեան, ինչպէս նաեւ հոլլանդական աստուածաբանութեան եւ քրիստոնէական բարոյագիտութեան դասախօս՝ Պէլրոսի Մերձատր Արեւելքի Աստուածաբանական Դեմարանին մէջ: Դասախօսութիւնը նուիրուած էր հայ աւետարանական էքիմենիզմի արմատներուն ու սահմաններուն:

Հայ Աւետարանական Եկեղեցույ մասնակցութիւնը մերձատր-արեւելեան եւ համաշխարհային էքիմենիք շարժումներուն, եւ անոր գործունէութիւնը՝ 1915ի ցեղասպանութենէն ետք, Մուրիոյ եւ Լիբանանի մէջ ազգային կառոյցներ ստեղծելու կապակցութեամբ, շատ հաւանաբար ըլլան հիմնական շեշտադրումները ապագայի այն պատմաբաններուն, որոնք պիտի ուսումնասիրեն Ի. դարուն Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցույ պատմութիւնը, ըսաւ Վեր. Հայտոսեան իր դասախօսութեան սկզբնաւորութեան: Ան յիշեցուց հանդիսականներուն, թէ Մերձատր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւնը հիմնադիր եւ գործօն անդամ է եօթ տարբեր էքիմենիք կամ շրջանային միջ-եկեղեցական մարմիններու:

Հայտոսեան նշեց, թէ Հայ Աւետարանական Եկեղեցույ խանդավառութիւնը էքիմենիք ձեռնարկներու մասնակցելու ուղղութեամբ, կրնայ բացատրուիլ հինգ տարբեր ազդակներով:

ա) Հայ Աւետարանական Շարժման հիմնադիրներուն ԺԹ. դարու երկրորդ կիսուն դիմագրաւած հարածանքները՝ հայ առաքելականներու կողմէ, պատճառ հանդիսացան, որ անոնք եւ իրենց հետեւորդները քիկունք ու քաջալերանք փնտռեն ոչ-հայկական եկեղեցիներու մօտ:

բ) Հայ Աւետարանական Եկեղեցույ վարչական կեանքին ժողովական դրուածքը: Այս մէկը, կարեւորելով տեղական եկեղեցիներու եւ անոնց անդամներուն դերը, ներքին դաշնակցային կառոյցի մը մէջ կը միացնէ տարբեր հայ աւետարանական եկեղեցիները: Դասախօսը այսօրինակ կացութիւնը կոչեց «Հայ Աւետարանական Ներքին Էքիմենիզմ»:

գ) Հայ Անտարանական Եկեղեցին միշտ ալ ճանչցած է Հայ Առաքելական Եկեղեցին իբր «Մայր Եկեղեցի», այդպիսով առնուազն խորհրդանշական եւ զգացական կապ մը պահելով առաքելականներուն հետ, նպաստելով «հայկական էքիմենիզմի» գոյատումին: Վերապատուելին վկայակոչեց անտարանականներու եւ առաքելականներու կողմէ այս մայր-գաւկի յարաբերութիւնը կենսագործելու շարք մը անհատական նախաձեռնութիւններ:

դ) Երբ օսմանեան կառավարութիւնը 1850ին ճանչցաւ միասնական «բողոքական միլլէթ» մը, որ համայնքային մէկ կառոյցի մը մէջ կը պարփակէր հայ, յոյն, ասորի, արաբ եւ այլ անտարանականները, ան շեշտը դրաւ կրօնական, եւ ո՛չ թէ ազգային նոյնութեան վրայ: Այս պատճառով, հայ անտարանականները ստիպուած եղան համագործակցելու ոչ-հայ անտարանականներու հետ՝ շարք մը ձեռնարկումներու պարագային, որոնց կարգին՝ Ալեկիփօ Գռլէճն ու Մերձատր Արեւելքի Աստուածաբանական Ընծարանը:

ե) Հայ անտարանական կրօնական կենսափորձն ու կրթութիւնը կը շեշտեն կարգ մը աստուածաբանական պարագաներ, ինչպէս անձնական կրօնական փորձառութիւնը, մտքի վերանորոգումը, Աստուածաշունչի սերտողութիւնը, աղօթքի վրայ հիմնուած կեանքը եւլն.: Այս բոլորը ճամբայ կը բանան էքիմենիք մտածողութեան:

Այդուեանդերձ, հայ անտարանական էքիմենիզմը ունի իր սահմաններն ալ, ըստ վերապատուելին: Առաջինը ազատութեան գաղափարն է, որ կարեւոր դեր մը խաղաց Առաքելական Եկեղեցիէն անջատումին մէջ, մօտաւորապէս 155 տարիներ առաջ: Այս գաղափարը դրոշմուած է հայ անտարանական մտածողութեան մէջ եւ կրնայ արգելակել որեւէ էքիմենիք զարգացում, որ կրնայ սպառնալ այդ ազատութեան:

Երկրորդ սահմանը, ըստ դասախօսին, կ'առնչուի եկեղեցաբանական խնդիրներու, ուր բացի պաշտօնականացումէ էքիմենիզմի շրջանակներէն, Հայ Անտարանական եւ Առաքելական Եկեղեցիներուն միջեւ չկայ նոյնիսկ փոխադարձ պաշտօնական ճանաչում:

Վեր. Հայտոսեան աւարտեց իր խօսքը կարգ մը եզրակացութիւններով: Ի. դարու էքիմենիք շարժումը, ըստ ան, առ այսօր չէ նպաստած հայ երեք եկեղեցիներու պաշտօնական մերձեցման: Հայոց համար, համազգային միութեան հասնիլը միշտ առաջնահերթ եղած է քան եկեղեցական միութիւնը: Հետեւաբար, Հայ Անտարանական Եկեղեցին պիտի շարունակէ իր անջատ ջանքերը, քայց միշտ ալ պատրաստ ըլլալու է նոր մօտեցումներ փնտռելու եւ խորացնելու երկխօսութիւնը՝ այլ, հայ եւ ոչ-հայ եկեղեցիներու հետ:

## 2.

«Հայ Առաքելական Եկեղեցին Հայաստանի Անկախութենէն Ատղին»  
դասախօս՝ Հրայ Զիլինկիբեան  
13 Դեկտեմբեր 2001

Վեցերորդ դասախօսութեան համար, այս շարքի կազմակերպիչ յանձնախումբը (Վեր. Փօլ Հայտոսեան, Արտա Էքմէքճի եւ Արա Սանճեան)

Լոնտոնէն հրաւիրած էր արդի եկեղեցական պատմութեան մասնագէտ Յէլիքս Քորլին: Երբ վերջինս՝ առողջական պատճառներով, հրաժարեցաւ սոյն հրատէրէն, յանձնախումբը Քորլին փոխարէն Պէյրոս հրաւիրեց Հրայ Չիլինկիրեանը, կրկին Լոնտոնէն, որպէսզի դասախօսէ 1991էն՝ Հայաստանի անկախացումէն ի վեր, Հայ Եկեղեցւոյ դիմագրաւած մարտահրաւերներուն մասին:

Չիլինկիրեան, որ ընկերաբանութեան գծով դոկտորական ատենախօսութիւն պիտի պաշտպանէ Լոնտոնի Համալսարանի Տնտեսագիտութեան եւ Քաղաքական Գիտութիւններու Դպրոցին մէջ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ սարկաւազ է: Ան Ս. Վլադիմիր Աստուածաբանական Համալսարանէն ստացած է Աստուածաբանութեան Մագիստրոսի տիտղոս, իսկ Նիւ Եորքի Ս. Ներսէս Հայկական Դպրեվանքէն՝ Հայ Եկեղեցական Ուսմանց վկայական: 1991էն 1994, ան վարիչն էր Ս. Ներսէս Դպրեվանքին: Չիլինկիրեան նաեւ համա-հիմնադիր եւ խմբագիր էր *Window View of the Armenian Church* եռամսեայ հանդէսին (1990-95), եւ անկի ուշ՝ *Armenian International Magazine*ի պատասխանատու խմբագիր (1998-Փետրուար 2001): Ան հեղինակ է հայկական ժամանակակից հարցերու նուիրում եւ ուղղակիօրէն Հայաստանեայց Եկեղեցւոյ առնչուող բազմաթիւ յօդուածներու:

Չիլինկիրեան սկսաւ իր դասախօսութիւնը ներկայացնելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իբր հայկական ամենամեծ ազգային հաստատութիւնը՝ հայկական պետութենէն ետք, ինչպէս նաեւ ամենէն կազմակերպուածն ու երկարակեացը՝ ամբողջ աշխարհի մէջ: Այդուհանդերձ, եւ ի հեճուկս 1991էն առդին Հայաստանի եւ հայութեան դիմագրաւած վիթխարի փոփոխութիւններուն, Եկեղեցին, ըստ Չիլինկիրեանի, կը շարունակէ յարաբերարար անփոփոխ մնալ: 1950ականներու աւարտին սկիզբ առած պառակտումը, երբ «Կիլիկեան Աթոռը, սփիւռքի մէջ քաղաքական կուսակցութեան մը ազդեցութեամբ, դուրս գալով իր պատմական սահմաններէն, թեմեր հաստատեց Միացեալ Նահանգներու, Իրանի եւ Յունաստանի մէջ», տակաւին կը մնայ անլոյծ: Հայաստանեայց Եկեղեցին եւ անոր ղեկավարութիւնը դեռ չեն անդրադառնար, թէ աշխարհականացումն ու համաշխարհայնացումը որքան կ'ազդեն իրենց տեղին ու դերին վրայ: Փոխարէնը, «Եկեղեցւոյ ղեկավարութիւնը, ըստ Չիլինկիրեանի, իր հանգիստը գտած ըլլալ կը բոլի իր անցեալի պատմական փառքն ու իրագործումները վերյիշեցնելու մէջ»: Ան վկայակոչեց վերջին, 1700ամեակի հանդիսութիւնները, իբր վառ ապացոյց իր համոզմունքին: Անկին, հակառակ համաշխարհային մակարդակի վրայ առաջնորդի ու ղեկավարի ըմբռնումներու ու հասկացութիւններու փոփոխուող չափանիշներուն, Հայ Եկեղեցին դեռեւս կ'առաջնորդուի անհատական նախասիրութիւններու վրայ հիմնուած ղեկավարութեան սկզբունքներով: Վերջերս առաջարկուած եկեղեցական նոր սահմանադրութիւնը, այս առնչութեամբ յանելեալ հակադրութիւններու տեղիք կու տայ, մանաւանդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակութեան ու իրաւասութիւններու հարցին շուրջ:

Դասախօսութեան երկրորդ բաժինը նուիրուած էր Եկեղեցին եւ անոր հաւատացեալներուն փոխ-յարաբերութեան խնդրին: Չիլինկիրեան այս հարցը ներկայացուց իբր «ժամանակակից Հայ Եկեղեցւոյ եւ հոգեւոր կեանքի ամենաթիչ ուսումնասիրուած մարզը»: Հակառակ Եկեղեցւոյ ու

եկեղեցականներու տուած քացատրութիւններուն, ընդհանրապէս կրօնի, ու մասնատրապէս Հայ Եկեղեցոյ դերին ու պաշտօնին մասին տրուած մեկնարանութիւնները միանշանակ չեն բոլոր հայերուն մօտ: Ան հայ «հաւատացեալներ»ը բաժնեց գլխաւոր չորս խումբերու՝ *բէխքներ*, *տէխքներ*, *ազնօտիկներ* եւ *աբէխքներ*:

Հայ Առաքելական Եկեղեցին կը մնայ գլխաւոր խորհրդանիշը «հայկական կրօնին», որ կը փոխանցուի ընտանիքներուն եւ եկեղեցական կառոյցներուն կողմէ: Մակայն, շարունակեց Չիլինկիրեան, ներկայիս Հայ Առաքելական Եկեղեցին գալիքին նկատմամբ ունի աղօտ պատկերացում մը, իսկ անհատ հայերու կեանքին մէջ՝ մակերեսային դերակատարում մը միայն:

Դասախօսութեան յաջորդող հարց-պատասխանի բաժնին մէջ, Չիլինկիրեան անդրադարձաւ հանդիսականները հետաքրքրող կարգ մը նիւթերու: Ան առարկեց այն համոզումին դէմ, թէ եկեղեցի չյաճախելու հիմնական պատճառն է ծիսական լեզուն՝ գրաբարը: Ան ըսաւ, թէ աշխարհականացումը գլխաւոր ազդակ մըն է այս ուղղութեամբ, եւ թէ հոգեւոր սնուցումը նախնաւորաջ անձնական ճիգի արդիւնք է: Ան յոյս յայտնեց, որ հայ ծնողներ կը քաջալերեն իրենց զաւակները, որպէսզի նուիրուին եկեղեցական ասպարէզի, որովհետեւ կարող ղեկավարութիւն մը ունենալը, եկեղեցական իրավիճակի բարելաման նախապայմաններէն է: Բարեփոխութիւններու հարցով, ան ըսաւ, թէ ընդհանուր անյատակութիւն մը կայ միտքերու մէջ, թէ եկեղեցական կեանքի ո՞ր երեսներուն մասին պէտք է ըլլան քննարկուելիք առաջարկները:

Չիլինկիրեան համաձայն չգտնուեցաւ Հայ Առաքելական Եկեղեցոյ ու Հայաստանի պետութեան միջեւ համապարփակ համաձայնագիրի մը կնքումին, ըսելով, թէ այդպիսի արարք մը, կրնայ Հայ Եկեղեցին ինքնագոհ կացութեան մը մատնել: Մակայն, ան համամտութիւն յայտնեց այն մտքին, թէ իրաւական հասկացութիւն մը աներաժեշտ է Եկեղեցոյ ու պետութեան միջեւ, խորհրդային տարիներուն Եկեղեցիէն բռնագրաւուած հողերու վերադարձին եւ այլ խնդիրներու վերաբերեալ: Դասախօսը դրական համարեց կրօնական տարրեր համայնքներու միջեւ մրցակցութեան գոյութիւնը Հայաստանի մէջ, որու պատճառով բոլոր կողմերն ալ զգաստ կը մնան: Ան ըսաւ, թէ մարդիկ կը չափազանցեն Հայաստանի մէջ աղանդատրներու իսկական քիւր:

Երեկոն, որ նաեւ եզրափակումն էր 1700ամեակի դասախօսութիւններու շարքին, աւարտեցաւ նամալսարանի նախագահ Վեր. Ժան Խանճեանի շնորհակալական խօսքով ու աղօթքով:

### ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼԱԶԱՆ ՆԻԹԵՐՈՒ ՇՈՒՐԶ

Բացի 1700ամեակին նուիրուած վերոյիշեալ դասախօսական շարքէն, Հայագիտական Ամբիոնը կազմակերպեց նաեւ շարք մը անկախ դասախօսական երեկոններ՝ սովորաբար հիւրաբար Պէյրութ գտնուող հայրենի եւ սփիւրթահայ հայագետներու կողմէ:

**«Արժանքինահայ Համայնքն Ու Սփիւռքեան Նոր Մարտահրաւրները»  
դասախօս՝ Խաչիկ Տէր-Ղուկասեան  
7 Դեկտեմբեր 2000**

7 Դեկտեմբեր 2000ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պուէնոս Այրեսի *Արմենիա* պաշտօնաթերքի նախկին խմբագիր եւ միջազգային յարաբերութիւններու դասախօս Խաչիկ Տէր-Ղուկասեան խօսեցաւ արժանքինահայ համայնքի պատմութեան ու ներկայի մարտահրաւրներուն մասին:

Նկատի առնելով, որ դասախօսութիւնը կը զուգադիպէր 1988ի Հայաստանի աղիտալի երկրաշարժի 12րդ տարելիցին, հանդիսականները մէկ րոպէ յտնկայս լռութեամբ յիշեցին արհաւիրքի զոհերն ու անոր հետեւանքով առ այսօր անապաստան գտնուողները:

Երեկոյի հանդիսավար Արա Սանճեան յիշեցուց, թէ լիբանանահայ Խաչիկ Տէր-Ղուկասեան շրջանաւարտ եղած է Հայկազեան Գոլէճէն՝ 1985ին, ապա՝ հաստատուած է Պուէնոս Այրես, ուր կը գործէ լրագրութեան եւ կրթութեան ասպարէզներուն մէջ: Սանճեան նշեց, թէ Հայկազեան Համալսարանը հպարտութեամբ կ'ողջունէ իր մէկ շրջանաւարտը, որ 13 տարի ազգային ծառայութեան մէջ գտնուելով, այժմ հրապարակաւ կ'ուզէ բաժնեկցիլ իր տպաւորութիւններն ու փորձառութիւնները սփիւռքի մէկ կարեւորագոյն գաղութէն՝ արժանքինահայութենէն, որուն մասին լիբանանահայերը դժբախտաբար քիչ քան գիտեն: Տէր-Ղուկասեանի ուսումնասիրութիւններուն ծիրը ընդարձակ է, ըսաւ Սանճեան: Սակայն, այսօր իրմէ խնդրուած է խօսիլ Արժանքինի մասին, որովհետեւ Հայագիտական Ամբիոնը այսպիսով կը ջանայ փոքրացնել վերեւ յիշուած անջրպետը երկու գաղութներուն միջեւ: Սանճեան յիշեցուց նաեւ, թէ Արժանքինի եւ Հարաւային Ամերիկայի հայագաղութներուն մասին, զգալի թիւով յօդուածներ լոյս տեսած են *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* վերջին քանի մը հատորներուն մէջ:

Տէր-Ղուկասեան, իր խօսքի սկզբնաւորութեան համառօտակի ներկայացուց Նոր Աշխարհ գացած հայոց մասին եղած առաջին տեղեկութիւնները, արժանքինահայ համայնքի ծագումն ու ազգագրական պատկերը, յիշեցնելով, որ գաղութը հիմնականին մէջ արդիւնք է հայոց ցեղասպանութեան: Ապա ան կեդրոնացաւ Արժանքինի հայկական եկեղեցիներուն, գանազան քաղաքական, հայրենակցական, մարզական, մշակութային կազմակերպութիւններուն ու անոնց գործունէութիւններուն, արժանքինահայ զանգուածային լրատուամիջոցներուն վրայ, ու խօսեցաւ Պրագիյի եւ Ուրուկուայի գաղութներուն հետ ունեցած միջ-գաղութային կապերուն մասին:

Իր խօսքին երկրորդ բաժնով, դասախօսը անդրադարձաւ արժանքինահայ գաղութի դիմագրաւած նոր մարտահրաւրներուն: Հիմնական վերատեսութիւններու կարիքը կը զգացուի հիմա, յատկապէս վերջին երկու տասնամեակներուն ծաւալած հսկայական փոփոխութիւններու լոյսին տակ, ըսաւ դասախօսը: Անոնցմէ առաջինը՝ համաշխարհային գեոմի վրայ, ցուրտ պատերազմի աւարտն ու համաշխարհայնացման գործընթացի նոր քափն է: Ապա՝ արժանքինեան մակարդակի վրայ, 1983էն ի վեր տեղի ունեցող դեմոկրատականացման գործընթացը, իսկ երրորդ՝ 1988էն սաղին հայաստանեան իրադարձութիւնները: Նախապէս համայնքը «կեթթոյական»

վիճակ մը ունեցած է: Հայեր չեն առնչուած տեղական քաղաքական կեանքին. նոյնիսկ, խուսափած են անկէ: Իսկ հիմա, հնարաւորութիւնը կայ տեղական քաղաքականութեան մարզին մէջ նոր առիթներ գտնելու եւ անոնցմէ օգտուելու: Արժանքինի խորհրդարանին կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչումը, եւ 1987ին ալ նախկին նախագահ Ռատու Ալֆոնսինի նմանատիպ քայլը, ազգային կեանքի գործունեայ տարրերը մղեցին միախառնուելու արժանքինեան ընկերութեան հետ, միաժամանակ պահպանելով իրենց ազգային ինքնությունն ղիմագիծը: Տէր-Ղուկասեան Արժանքինի կացութիւնը նմանցուց արեւելեան Միացեալ Նահանգներու եւ արեւմտեան Եւրոպայի հայազաղութներուն: Ըստ դասախօսին, արժանքինահայութեան աշխուժութիւնը աննկատ չէ մնացած նոյնիսկ Անգարայի աչքէն, երբ ան 1995ին բացայայտ միջամտութեամբ փորձած է վիժեցնել Ապրիլ 24ը պաշտօնական յիշատակի օր յայտարարելու օրէնքի մը հռչակման ջանքերը:

Վերջապէս, անդրադառնալով զաղութին եւ Հայաստանի միջեւ կապերուն, Տէր-Ղուկասեան քննադատաբար արտայայտուեցաւ Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վարած քաղաքականութեան մասին, ըսելով, որ ատիկա վնասակար անդրադարձ ունեցած է զաղութի անդորրին վրայ: Վիճակը սակայն բարելաւուած է Տէր-Պետրոսեանի հրաժարականէն, եւ Արժանքինի մէջ հայկական դիւանագիտական ներկայացուցչութեան հաստատումէն ետք:

Տէր-Ղուկասեանի դասախօսութեան հանդէպ հետաքրքրութիւնը ակնյայտ դարձաւ մանաւանդ հարց-պատասխանի ժամանակ, որ ինքնին տեւեց դասախօսութեան չափ: Հարցումներ ուղղուեցան արժանքինահայութեան իսկական թիւին, «Հայկական Հարց»ի վերաբերեալ դասախօսի ըմբռնումին, եւ նոյնիսկ պրագիլահայ համայնքին մասին: Տէր-Ղուկասեան սպառնիչ պատասխաններ տուաւ բոլոր հարցերուն, այդպիսով ատիկի ամբողջացնելով Հարաւային Ամերիկայի հայութեան մասին Լիբանանի իրենց հայրենակիցներուն ունեցած գիտելիքները:

**«Քրիստոնէութիւնը եւ Հայոց Ազգային  
Գաղափարախօսութեան Չեւառումը»  
դասախօս՝ Համբարձում Քենտերեան  
19 Ապրիլ 2001**

Բանասէր եւ հայ միջնադարեան գրականութեան մասնագէտ Համբարձում Քենտերեան, դասախօսեց հայոց ազգային գաղափարախօսութեան ձեւաւորման մէջ քրիստոնէութեան ունեցած դերին շուրջ:

Քենտերեան ծնած է Դամասկոս: Մանկութիւնը անցած է Պէյրութի մէջ, որ յաճախած է Համազգայինի Դեմարանը: Ապա, ընտանիքին հետ ներգաղթած է Հայաստան: Գրաքննադատ Եւրի Խաչատրեան, որ ներկայացուց Քենտերեանը, ըսաւ, թէ 6 տարուան Միպերիա արտօրէն վերադառնալով, Քենտերեան 1957ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական ֆակուլտետը: Աշխատած է Հայաստանի Գրողներու Միութեան պաշտօնաթերթ *Գրական Թերթ*ին մէջ, սպա՝ 17 տարի՝ Մանուկ Արեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտին մէջ: Քենտերեան հե-

դինակ է Ջ.-Է. դարերու նշանաւոր փիլիսոփայ եւ եկեղեցական գործիչ Յովհան Մայրազոմեցիի մասին մեծագործեան մը: Ան ունի բազմաթիւ քարգմանութիւններ ամերիկեան ու ֆրանսական արձակէն: Ներկայիս կը ղեկավարէ իր երկու նշանաւոր ուսուցիչներուն՝ Լեոն Շանքի եւ Նիկոլ Աղբալեանի գրական ժառանգութեան հրատարակութիւնը պատրաստող գիտական խումբը: 55 տարուան մէջ, սա իր առաջին այցելութիւնն էր Պէյրութ:

Քենտերեան ըսաւ, թէ քրիստոնէութիւնը թէւ աստիճանաբար քափանցած է Հայաստան, բայց հաստատուն տեղ մը գրաւած է այնտեղ նոյնիսկ 301ի պաշտօնականացումէն առաջ: Այդ ժամանակ, հայերը ճուլման լուրջ սպառնալիքի տակ էին, որովհետեւ Պարսկաստանը, իր իշխանութեան տարածքին վրայ կրօնական միատարրութիւն առաջացնելու նպատակով, զրադաշտականութիւնը կը պարտադրէր իր ազդեցութեան ոլորտին մէջ ապրող այլակրօն ժողովուրդներուն: Քրիստոնէութեան որդեգրումը, ըստ Քենտերեանի, լաւ մտածուած քայլ մըն էր հայոց Տրդատ Գ. քազաւորին կողմէ, որ երրորդ կրօնի մը որդեգրումով, Հայաստանը կը հեռացնէր զրադաշտական Պարսկաստանի եւ հեթանոս Հռոմի ներազդեցութենէն, եւ միաժամանակ կը պահպանէր հայոց ազգային ինքնութիւնը: Վկայակոչելով հայ հնագէտներու ուսումնասիրութիւնները, ան ըսաւ, թէ քրիստոնէութեան պարտադրման նպատակով հեթանոսական մշակոյթի բնաջնջման փաստեր չկան Հայաստանի մէջ, որմէ եզրակացնելով, Քենտերեան հետեցուց, թէ կրօնական փոխանցումը եղած է յարաբերաբար խաղաղ պայմաններու տակ, եւ նախորդ կրօնական իշխանաւորներու հաւանութեամբ: Աւելին, կարգ մը մէջբերումներ ընելով վաղ միջնադարեան *Յաճախապատում* ճանրերու ժողովածուէն եւ Յովհան Մայրազոմեցիէն, ան հաստատեց, թէ ազգային ինքնությունը դիմագիծի պահպանման նոյն ձգտումը, մղած է կարգ մը եկեղեցական ղեկավարներ, որ ներքին տարակարծութիւնները խաղաղութեամբ լուծելու եւ իշխանաւորներու հանդէպ հնազանդ մնալու կոչեր ընեն:

Քենտերեան իր այս կարծիքը հիմնաւորեց օրինակները բերելով հայ եկեղեցական եւ քաղաքական պատմութենէն: Քրիստոնէութիւնը, ըսաւ ան, իսկապէս զօրաւոր գէնք մը եղաւ հայոց ձեռքը, զրադաշտականութեան եւ իսլամութեան դէմ դարաւոր պայքարին ընթացքին: Սա լաւագոյնս կը դրսեւորուի Վարդանանց ճակամարտով, Փաստոս Բուզանդի ու Եղիշէի երկերով, Ս. Շուշանիկի ու Վահան Գողթնացիի վկայարանութիւններով, ելն:

Քանի մը տարի ետք, Հռոմէական Կայսրութեան կողմէ Քրիստոնէութեան ընդունով, հայեր եւ կայսրութեան արեւելեան սահմաններուն մէջ ապրող այլ ժողովուրդներ, ստիպուեցան իրենց ազգային ինքնությունութեան սպառնացող հռոմէա-բիզանդական ճնշումներուն դէմ պայքարելու այլ ուղղութիւններ որոնել: Հայ գիրերու գիտը նման քայլ մըն էր, ուղղուած ոչ միայն Պարսկաստանի, այլ նաեւ Հռոմի ալ դէմ: Քենտերեան յիշեցուց, որ հայեր այս ուղղութեամբ դիմած էին ասորիներու եւ ոչ յայնէտեղ օժանդակութեան, եւ թէ վերջիններս, սկիզբը նոյնիսկ դէմ կեցած էին իրենց իշխանութեան սահմաններուն մէջ նոր գիրերուն տարածումին: Մի քանի տասնամեակ անց, Հայաստանեայց Եկեղեցին մերժեց Բաղկեղոնի ժողովին որդեգրած որոշումները, հաւատարիմ մնալով նախորդ Նիկիոյ եւ Եփեսոսի տիեզերական ժողովներու բանաձեւերուն: Հայաստանի ընդդիմութիւնը Բաղկեղոնական Հաւատամքին նախապէս շատ զգոյշ էր: Սակայն, եօթն-

բորդ դարուն, Վրաց Եկեղեցոյ անջատումէն ետք, արարական տիրապետութեան ժամանակ, Հայաստանեայց Եկեղեցին կտրուկ քայլերու դիմեց Ադուանից Եկեղեցին իր գերադասութեան ներքոյ պահելու համար: Հայաստանեայց Եկեղեցին, նոյնիսկ սկզբնական շրջանին մերժեց Բիզանդիոնի Հերակլ Ա. կայսեր առաջարկած միակամութեան ուսմունքը, վախճալով, որ այդ զիջումին երթալով, կրնայ վտանգուիլ հայոց ինքնուրոյն ազգային դիմագիծը:

Քննտերեան նշեց, թէ իրենց գերիշխանութիւնը պարտադրելու բիզանդացիներու փորձերուն դէմ հայոց պայքարը, Հայաստանեայց Եկեղեցին մղած է, որ ինզիմսքին վերագրէ առաքելական ծագում, հաստատել կայուն եւ անջատ եկեղեցական նուիրապետութիւն մը, եւ մշակել իր սեփական կրօնական դաւանանքը:

Հայ ժողովուրդը եւս ընդունած էր, որ հայ ազգ ու հայ քրիստոնեայ եկեղեցի, միեւնոյն բաներն են: Դասախօսին համար, Յովհան Մայրազոմեցիի եւ Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի մասին ժողովրդական գրոյցները, լատագոյն օրինակներն են այս վերաբերմունքին:

Հայկազեան Համալսարանէն ներս, Քննտերեանի դասախօսութիւնը կազմակերպուած էր Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի համագործակցութեամբ:

**«Մաշտոցեան Մատենադարանն  
Ու Հայ Ծեռագրագիտութեան Ներկայ Խնդիրները»  
դասախօս` Գեորգ Տէր-Վարդանեան  
7 Մայիս 2001**

Գեորգ Տէր-Վարդանեան, որ հրատիրուած էր 1700ամեակի դասախօսութիւններու շարքին առիթով, տուաւ յաւելեալ դասախօսութիւն մը, նիւթ ունենալով Երեսնի Մաշտոցեան Մատենադարանը եւ ընդհանրապէս հայ ձեռագրագիտութեան ներկան:

Ան ըսաւ, թէ այսօր աշխարհի տարածքին կան մեզի ծանօթ մօտաւորապէս 30,000 հայերէն ձեռագիրներ: Ասոնցմէ 11,000ը կը գտնուի Մատենադարանին մէջ, ուր կան նաեւ 2,000 պատասիկներ, 450 հմայիլներ, եւ 320 այլ ձեռագիրներ` աւելի նոր ժամանակներէ: Տէր-Վարդանեան յիշեցուց, որ հայոց պատմութեան խոռվալի տարիներուն, մեծ թիւով ձեռագիրներ փճացած են: Վերջիններէն են այն 10,000 ցուցակագրուած ձեռագիրները, որոնք կը գտնուին Արեւմտեան Հայաստանի մէջ, եւ մեծաւ մասամբ կորսուեցան ցեղասպանութեան ընթացքին:

Մատենադարանը, ըսաւ Տէր-Վարդանեան, շարունակութիւնն է Էջմիածնի Կաթողիկոսութեան նախկին գրադարանին, որ պետականացուեցաւ 1921ին: Ան հարստացաւ խորհրդային տարիներուն, շնորհիւ պետական օժանդակութեան, եւ հնարաւորին չափ բոլոր ձեռագիրները հաւաքելու եւ մէկ երդիքի տակ համախմբելու վերջինիս քաջալերած քաղաքականութեան: 1950ականներէն ի վեր, Մատենադարանին ձեռագիրներ կը նուիրուին նաեւ սփիւռքէն:

Այսօր Մատենադարանին մէջ կը գտնուին նաեւ 6000 օտարալեզու ձեռագիրներ, ինչպէս` արաբերէն եւ եթովպերէն, Էջմիածնի կաթողիկոս-

քան նախկին դիանեն 300,000 կարևոր փաստաթուղթեր, ինչպես նաև ԺԹ.-Ի. դարերու նշանաւոր հայագետներու՝ Գարեգին Ա. Յովսէփեանց Կարողիկոսի, Երուանդ Տէր Մինասեանի, Յակոբ Մանանդեանի, Աշոտ Յովհաննիսեանի, Արշակ Ալպոյաճեանի, Լեոյի եւ այլոց անձնական արխիւները:

Մատենադարանը ունի նաև հայ պարբերական մամուլի ճոխ հաւաքածոյ մը, ինչպես նաև հայագիտական ուսմանց հանդէսներու ամբողջական շարքեր: Այսօր Մատենադարանին մէջ կ'աշխատին աւելի քան 50 գիտնականներ, եւ 70 այլ պաշտօնեաներ: Վերջին տարիներուն, յատկապէս սփիւոքի նիւթական աջակցութեամբ, հրատարակուած են կարգ մը արժէքաւոր աշխատութիւններ:

Տէր-Վարդանեան, իր խօսքին մէջ բուարկեց շարք մը անհրաժեշտ գիտական ձեռնարկումներ, որոնք կրնան բարելաւել հայ ձեռագրագիտութեան վիճակը, եւ դիրացնել հայ ձեռագիրները ուսումնասիրողներու աշխատանքը: Պէտք է կազմուի, ըսաւ ան, իբր գիրք տպուած, կամ մամուլին մէջ ցրուած հայկական աւելի քան 500 ձեռագրացուցակներուն նոր մատենագիտութիւնը, նախընտրաբար՝ համակարգչային արդի միջոցներն օգտագործելով: Աւելին, ցուցակագրումի ներկայ դրութիւնը, որ ստեղծուած է ԺԹ. դարուն՝ Հ. Յակովբոս Տաշեանի կողմէ, պէտք է հարստացուի նոր տուեալներով. օրինակ, պէտք է յետ այսօրիկ տրուին նաև օգտագործուած բոլորի տեսակին մասին կարգ մը տեղեկութիւններ, որոնք կրնան յստակ պատկերացում տալ յիշատակարան շունեցող ձեռագիրներուն գրութեան բուականին մասին:

Դասախօսութեան աւարտին, հարց-պատասխանի բաժինը ստացաւ բաւականին ընդարձակ ծաւալ: Հարցումներ եղան Մատենադարանի պիտոճէի գոյացումին եւ կազմակերպչական կառոյցին մասին: Մեծ էր հետաքրքրութիւնը ձեռագիրները լաւագոյն պայմաններու մէջ պահպանելու ուղղութեամբ կատարուած քայլերուն հանդէպ, եւ թէ ինչպէս կարելի է արդիական եւ անընդհատ զարգացող համակարգչային եւ համացանցի դրութիւններէն օգտուիլ յետագայ ուսումնասիրութիւններու համար: Տէր-Վարդանեան ըսաւ, թէ Մատենադարանը կը շարունակէ պահել իր կապերը Հայաստանէն դուրս գտնուող հայագիտական կեդրոններու հետ: Օտար ուսումնասիրողներ կու գան Հայաստան, ուսումնասիրելու համար Մատենադարանին հայերէն եւ օտարալեզու ձեռագիրները, որոնք հետզհետէ կը համալրուին նորերով: Կը շարունակուի նաև նոր ուսումնասիրութիւններու հրատարակութիւնը: Մատենադարանը կը մասնակցի նաև հայոց պատմութեան եւ մշակոյթին նուիրուած ցուցահանդէսներու, ինչպէս վերջերս տեղի ունեցաւ Փարիզի եւ Լոնտոնի մէջ: Դասախօսը յոյս յայտնեց, թէ վերջերս ստեղծուած «Մատենադարանի Բարեկամներ» ընկերութիւնը, դրական դեր մը կրնայ ունենալ այս ուղղութեամբ: Պետական պաշտօններու ցած աշխատավարձերը ուսումնասիրութեանց եւ կրթութեան քնազատուները անհրապոյր մարզերու վերածած են, ավստաց Տէր-Վարդանեան, քայց՝ եզրափակելով իր խօսքը, ըսաւ, թէ բարելաման յոյսը միշտ սուկայ է:

«Հայերու Բռնագաղթը Թուրքիայէն եւ Ենզիրէ Հաստատուիլը (1928-1930)»  
դասախօս՝ Վահէ Թաշճեան  
7 Յունիս 2001

Պատմութեան գծով Ֆրանսայի մէջ դոկտորական աստիճանի քեկնա-ծու, բնիկ լիբանանահայ Վահէ Թաշճեան, Պէյրութ կատարած այցելու-թեան մը ընթացքին, դասախօսեց 1928-30ին Թուրքիայէն հայոց բռնագաղ-թին, եւ անոնց հիւսիս-արեւելեան Սուրիոյ Ենզիրէի շրջանը հաստատուե-լուն մասին:

Թաշճեան 1993ին կ'աւարտէ Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետը: Անի ուշ, արեւելագիտութեան մէջ մասնա-գիտանալով, մագիստրոսական երկրորդ տիտղոսով մը կը վկայուի Պելճի-քայի Լուվէն-լա-Նէովի Կաթողիկէ Համալսարանէն: Իր դասախօսութեան նիւթը մաս մըն է 1919-39ին բուրք-սուրիական սահմանագիծին երկայնքին քաղաքական իրադրութեան մասին Փարիզի Ընկերային Գիտութիւններու Բարձրագոյն Ուսմանց Դպրոցին մէջ իր պատրաստած դոկտորական ասարտաճառէն:

Թաշճեան իր դասախօսութիւնը սկսաւ մատնանշելով քէ Լոզանի Պայմանագիրը (1923) անկիւնադարձային նշանակութիւն ունեցաւ նորա-ստեղծ Թրքական Հանրապետութեան մէջ ապրող փոքրամասնութիւննե-րուն համար: Այդ պայմանագիրը թոյլ տուաւ Թուրքիոյ, որ շարունակէ փոքրամասնութիւններու թրքացման իր քաղաքականութիւնը: Մօտաւորա-պէս 100,000 հայեր 1921-22ին արդէն լքած էին Կիլիկիան, իսկ Թուրքիոյ մէջ ապրող բոլոր յոյները կը փոխանակուէին Յունաստան ապրող բուրքերով:

Լոզանի Պայմանագրին վաւերացումէն ետք, Թուրքիոյ պետական շրջանակները, կազմակերպեցին երկրին հարաւ-արեւելքը ապրող քրիս-տոնեայ փոքրամասնութիւններու մնացորդացին զաղթը դէպի դրացի Իրաք եւ Սուրիա: Թուրքիոյ Ներքին Գործոց Նախարար Ֆերիտ Պէյ, 1924ին, Ատանա հրատարակուող թունդ ազգայնական թերթի մը յայտնած է, քէ Մամսոն-Մելեֆթէ գիծէն դէպի արեւելք, արգիլեալ գօտի մը հաստատուած է հայերուն համար: Նոյն ժամանակ, Ուրֆա, Տիարպէքիք, Պիլճիկ եւ Արաք-կիր, ինչպէս նաեւ սահմանէն շատ հեռու՝ Խարբերդ եւ Մալաթիա ապրող քրիստոնեայ ասորիներու, հայերու եւ քաղղեականներու կը պարտադրուի զաղթել Թուրքիայէն:

Քրիստոնեայ փոքրամասնութիւններու բռնագաղթը 1928-30ին հասաւ մեծ չափերու, երբ 7-10 հազար հայեր՝ Տիարպէքիքէն, Խարբերդէն եւ Պիլճիկէն հասան Ենզիրէ եւ Հալէպ: Այս քրտախօս գիւղացի հայերը, քիւրա աղաներու եւ շէյխերու ճորտերը ըլլալով, ազատած էին 1915ի Մեծ Եղեռնէն շնորհիւ վերջիններուս ընդդիմութեան: 1925ի Շէյխ Սալիսի քրտական ապստամբութեան ճնշումէն ետք, թրքական իշխանութիւնները փորձեցին հնազանդեցնել այս շրջանի քիւրտ երեւելիները: Անոնց ազդեցութեան տկարացումը հայերն ու քաղղեականները թողուց անպաշտպան՝ թրքական բռնութիւններուն դիմաց:

Հայ գիւղացիները ոստիկաններու կողմէ նախ քշուեցան Սղերդ, Տիար-պէքիք եւ Մարտին, ուր կառավարութեան միջամտութիւններուն պատճա-ռով չկարողացան նոյնիսկ աշխատանք գտնել: Անոնք վերջապէս համա-

ձայնեցան «կամաւորապէս» մեկնիլ Սուրիա, սուղ սակերով անցագիրներ գնելով, եւ ծանր տուրքեր վճարելով: Հայերուն մեծ մասը Սուրիա հասաւ անտէր ու թշուար վիճակի մը մէջ: Անոնց անցագիրներուն պաշտօնական կնիքները բացարձակապէս կ'արգիլէին Թուրքիա վերադարձը:

Ֆրանսան, որուն հոգատարութեան (mandate) տակ կը գտնուէին Սուրիան ու Լիբանանը, անշուշտ մօտէն հետեւեցաւ Թուրքիայէն եկող գաղթականներու այս ներհոսքին: Այս հարցին մէջ Ֆրանսայի մեղսակցութիւնը մատնանշող փաստաթուղթեր չկան, ըստ Թաշճեան, բայց ֆրանսացիները զոհ չէին գաղթականներու այս հոսքով, որ կրնար քաղաքական բարդութիւններու պատճառ հանդիսանալ, որովհետեւ շատ մը արաբ սուրիացի ազգայնականներ հաշտ աչքով չէին դիտեր քրիստոնեաներու եւ ոչ-արաբներու ժամանումը Սուրիա: Ֆրանսա նոյնիսկ փորձեց հակադարձել, սպառնալով Ալէքսանտրէի Սանճաքի թուրքերը բռնի Թուրքիա դրկել: Հակառակ իրենց դժգոհութեան, ֆրանսացիք ստիպուած էին նոր ժամանած հայերուն համար ստեղծել յարմարութիւններ, եւ հոգալ անոնց ընկերային եւ տնտեսական կարիքները:

Ֆրանսացիները քաջալերեցին գաղթական գիւղացի հայերը հաստատուելու քերզարգացած Ենզիրէի շրջանին մէջ, որ, ըստ իրենց, ունէր երկրագործական հսկայ ներուժ, եւ մանաւանդ հեռու էր գլխաւոր քաղաքներէն, ուր կը գործէին ազգայնական ոյժերը: Աւելին, ոչ-արաբներու բնակութիւնը Ենզիրէի մէջ, ըստ Թաշճեան, կը ծառայէր նաեւ Սուրիան անդամահատելու ֆրանսացիներու ընդհանուր ծրագրին, որովհետեւ, այդպիսով, այդ շրջանը պիտի անջատուէր Դամասկոսէն եւ Հալէպէն:

Թաշճեանի դասախօսութիւնը հիմնուած էր Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան, բանակին, ծովուծին եւ Բրիտանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւներուն վրայ: Առաւել, այս կապակցութեամբ ան բազմաթիւ հարցազրոյցներ վարած է ներկայիս Ենզիրէ բնակող հայերու եւ քիւրտերու հետ:

«Հայկական Հարցի եւ Յեղասպանութեան  
Ուսումնասիրութեանց Հեռանկարները  
(ԺԹ. դարու վերջ – Ի. դարու սկիզբ)»  
դասախօս՝ Ռեմոն Յ. Գէորգեան  
19 Յուլիս 2001

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փարիզի Նուպարեան Մատենադարանի տնօրէն Ռեմոն Յ. Գէորգեանի սոյն դասախօսութիւնը նուիրուած էր ԺԹ. դարու աւարտի եւ Ի. դարու սկզբնաւորութեան Հայկական Հարցի եւ 1915-16ի ցեղասպանութեան ուսումնասիրութեանց հեռանկարներուն:

Գէորգեան նաեւ Փարիզ-Սորպոն III Համալսարանին մէջ գիտական հետազոտութեանց ղեկավար է, Հայ Ժամանակակից Պատմութեան Կեդրոնի (CHAC) տնօրէնը, եւ *Revue d'histoire arménienne contemporaine* պարբերականի գլխաւոր խմբագիրը: Ան հեղինակած ու խմբագրած է հայոց պատմութեան եւ մշակոյթին նուիրուած շարք մը ֆրանսերէն հատորներ, ինչպէս *Օսմանեան Կայսրութեան Հայերը Յեղասպանութեան Նախօրեա-*

կին (1992) և *Օսմանահայ Տարագրեալներու Բնաջնջումը Մուրիոյ Եւ Միջազգետփ Կեդրոնացման Կայաններուն Մէջ* (1998):

Գասախօսելով ֆրանսերէն, Գեորգեան իր խօսքին սկիզբը ըսաւ, թէ վերջին երկու տասնամեակներուն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) և արեւմտեան Եւրոպայի մէջ զգալի յառաջխաղացում կայ Հայկական Հարցի և ցեղասպանութեան սիստեմատիկ ուսումնասիրութեան գծով, մանաւանդ՝ օտար սկզբնաղբիւրներն օգտագործելու առնչութեամբ: Մինչեւ քսան տարի առաջ, այս նիւթերուն շուրջ լոյս տեսած գործերը կը հրատարակուէին գրեթէ միայն հայերէնով, ուր օգտագործուած կ'ըլլային համարեա քաջառապէս հայկական աղբիւրներ: Գեորգեան յիշեցուց ներկաներուն, թէ բրիտանական ու ֆրանսական դիւանագիտական և հիւպատոսական արխիւներն ու կաթողիկէ և բողոքական քարոզիչներու գրութիւնները մեծապէս օգտակար եղած են 1880-90ականներու կացութիւնն ու դէպքերը վերլուծելու համար:

Յամենայնդէպս, դեռ ահագին գործ կայ ընելիք, ըսաւ Գեորգեան: 1894-96ի համիտեան ջարդերը, որոնք խլեցին 100-300 հազար հայերու կեանքը, կարիքն ունին խորացուած ուսումնասիրութեան: Այդ շրջանին հրատարակուած բրիտանական, ֆրանսական, ռուսական և իտալական արտաքին գործոց նախարարութիւններու փաստաթուղթերու հաւաքածոները «մաքրագտուած» էին քաղաքական նկատառումներով: Ուստի, պատմաբանները պէտք չէ գոհանան հրատարակուած ժողովածուներով և պէտք է անմիջականօրէն դիմեն արխիւային սկզբնաղբիւրներուն: Տակաւին գիտնականներու մօտ տարակարծութիւն կայ, թէ արդեօք այս կոտորածները պէ՞տք է դիտել իբր 1915ի ցեղասպանութեան նախապատրաստական փուլ, թէ՞ անոնք իրաւագօրկ փոքրամասնութիւններու նկատմամբ օսմանեան աւանդական վերաբերմունքի հերթական դրսեւորումներ էին: Գեորգեան նշեց, թէ համիտեան կոտորածները պատճառ հանդիսացան ընկերային և տնտեսական աղէտներու: Հարիւրաւոր դպրոցներ ու եկեղեցիներ քանդուեցան: Հիմնականին մէջ երիտասարդ այրերու սպանութիւնը ստեղծեց ժողովրդագրական անհաւասարակշռութիւն: Երկրագործութիւնը վնասուեցաւ, և իբր հետեւանք 1903ին Մուշի, Վանի և Պիքիսի մէջ սով ծագեցաւ:

Գեորգեան ըսաւ, թէ օսմանեան պետութեան և բանակին արդիականացումը, գերմանական մասնակցութիւնը այդ գործընթացին, և վերջինիս բողած ազդեցութիւնը Հայկական Հարցին վրայ, կարօտ են յաւելեալ վերլուծութեան: Ցեղասպան երիտքորքերն ու քեմալական վերնախաղը արդիւնք են այդ արդիականացման արշաւին: Հայ կուսակցութիւններու և երիտքորքերու յարաբերութիւնները մանրամասն ուսումնասիրուած են հայկական աղբիւրներու հիմամբ, բայց թրքական աղբիւրներու օգտագործումը յաւելեալ լոյս կրնայ սփռել նաեւ այս հարցին վրայ: Երիտքորքերու բոլոր փաստաթուղթերը չոչնչացուեցան 1918ին՝ պատերազմի աւարտին: Ան յիշեց բոլոր պատմաբան Շիքրի Հանիօղլուի աշխատանքը, որ մահացած երիտքորք ղեկավարներու, ներառեալ՝ Էնվեր Փաշայի և Պէհա-Էտտին Շաքիի ընտանիքներէն հաւաքած է զանազան փաստաթուղթեր: Գեորգեան ըսաւ, թէ թրքական ոչ-պետական համալսարաններու մէջ կարծես կ'իշխէ աւելի անկախ մտածողութիւն մը, քան պետական բարձրագոյն ուսմանց հաստատութիւններուն մօտ: Այս սեփական համալսարաններուն

մէջ կրնան գտնուիլ պատմաբաններ, որոնց հետ ապագային կարելի ըլլայ համագործակցիլ:

Վերադառնալով 1915-16ի ցեղասպանութեան վերլուծութեան, Գեորգեան ըսաւ, թէ գերմանական եւ աստրո-հունգարական դիւանագիտական եւ ռազմական արխիւները, ինչպէս նաեւ ամերիկեան դիւանագիտական արխիւները առիթը կ'ընձեռնեն այս ուղղութեամբ քաղաքական վերլուծութիւններ կատարելու: Մակայն, աւելի ուշադրութիւն պէտք է դարձնել Թուրքիոյ տարրեր շրջաններէն հասած հիւպատոսական տեղեկագիրներուն վրայ, որպէսզի կարելի ըլլայ հասկնալ տեղահանութեան գործադրութեան մեքանիզմը: Գեորգեանի փափաքն է, մօտ ապագային տեսնել հայկական ցեղասպանութեան պատմութեան շրջան առ շրջան կանոնակարգուած ուսումնասիրութիւնը, օսմանեան եւ արեւմտեան աղբիւրներու, ինչպէս նաեւ եղեռնէն վերապրածներու վկայութիւններու օգտագործումով: Ան տուաւ իր անձնական աշխատանքին օրինակը, երբ կ'ուսումնասիրէր ցեղասպանութեան երկրորդ փուլը, Հիսիսային Սուրիոյ եւ Միջագետքի կեդրոնացման ճամբարներուն մէջ:

Ըստ Գեորգեանի, առստել մանրամասն ուսումնասիրութեան կը կարօտին Առաջին Համաշխարհային Պատերազմէն ետք կայացած երիտօրրք դեկավարներու դատավարութիւններուն փաստաթուղթերը: Անոնց հայերէն թարգմանութիւնը ցարդ մասնակի է, մինչ արդի թրքերէն տարրերակն ու գերմաներէն թարգմանութիւնը աւելի ամբողջական են: Այդ դատավարութիւններուն մասին Կոստանդնուպոլիսը գրած ֆրանսական եւ անգլիական քանակներուն հետախուզական բաժնի տեղեկագիրներուն մէջ կարելի է գտնել տեղեկութիւններ, որոնց չենք հանդիպիր պաշտօնապէս հրատարակուած արձանագրութիւններուն մէջ:

Հայկական ցեղասպանութեան մասին մեր գիտելիքները կարելի է աւելի եւս հարստացնել, ուսումնասիրելով տեղահանութեան հրահանգները մերժած եւ այդ պատճառով ալ անմիջապէս պաշտօնանկ եղած Անգարայի կառավարիչ Մազհարի 1918ի վերջէն սկսեալ հաւաքած տեղեկութիւնները: Իր կողմէ հաւաքուած քսան մեղադրական բնոյթի հեռագիրներ արդէն յոյս տեսած են առեւնի պոլսական մամուլին մէջ: Գեորգեան յոյս յայտնեց, որ օր մը այս արխիւը ամբողջութեամբ ի յայտ կու գայ, եւ կ'ուսումնասիրուի հայ եւ թուրք պատմաբաններու միացեալ յանձնախումբի մը կողմէ:

Խօսելով ցեղասպանութենէն փրկուածներուն մասին, Գեորգեան յիշատակեց Ծովինար Գեւորեանի արխիւային հարուստ տուեալներու վրայ հիմնուած դոկտորական արարտաճառը:

Ցեղասպանութեան պատճառով հայկական լքեալ գոյքերու ուսումնասիրութիւնը, ըսաւ Գեորգեան, յոյսի կը հանէ ներկայիս Արեւելեան Թուրքիոյ մէջ հայկական երեքհազարամեայ գոյութեան ժառանգութեան հիմնախնդիրը: Անձնական գոյքի հարցը, ըստ Գեորգեանի, շատ բարդ է եւ կարելի է միջ-պետական համաձայնութիւններով լուծել: Մակայն, Հայ Եկեղեցւոյ ունեցուածքները, ինչպէս դպրոցներ, եկեղեցիներ եւ վանքեր, կարելի է վերադարձնել իրենց իրաւատիրոջ՝ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին: Գեորգեան առաջարկեց կատարել հանրային սեփականութիւն սեպտող ունեցուածքներուն ամբողջական գոյրագրումը: Այդ աշխատանքը հիմա հազիւ կիսով կատարուած է:

Վերջապես, Գեորգեան կոչ ըրաւ ուսումնասիրողներուն, նաեւ ուշադրութիւն դարձնել «բարեխիղճ» օսմանահպատակներու վրայ. օրինակի համար, կազմել ցանկը այն կառավարիչներուն, զինուորականներուն, նոյնիսկ ամբողջ զիւղերու, որոնք փրկեցին հազարաւոր հայերու կեանքը: Այս մարդիկը, կրնան Թուրքիոյ համար աւելի տիպար ներկայացուցիչներ ըլլալ, քան երիւթուրքերն ու քեմալականները:

Հարց-պատասխանի բաժնով, դասախօսը անդրադարձաւ ցեղասպանութեան մէջ գերմանական պատասխանատուութեան խնդրին, ինչպէս նաեւ զուգահեռներ գծեց հայկական ցեղասպանութեան եւ 1915ի Լեռնալիբանանի սովին միջեւ: Ան ընդգծեց հայաստանցի պատմաբաններուն դերը ցեղասպանութեան ուսումնասիրութեան աշխատանքներուն մէջ: Գեորգեան յատկապէս գնահատեց Վերժինէ Սվազեանի վերջերս հրատարակած վերապրողներու վկայութիւնները, որոնք հաւարուած էին 1950-70ականներուն, խորհրդային վարչակարգի օրերուն:

**«Հայոց Ցեղասպանութեան Երկրորդ Փուլը՝  
Տարագրեալներու Չարդը Օսմանեան Սուրիոյ Տարածքին»  
դասախօս՝ Ռեմոն Յ. Գեորգեան  
2 Օգոստոս 2001**

Ռեմոն Յ. Գեորգեանի երկրորդ դասախօսութիւնը Հայկազեան Համալսարանին մէջ կը վերաբերէր Սուրիոյ տարածքին վրայ տեղի ունեցած տեղահանեալ հայերու ջարդին, որ Գեորգեան կը համարէ «ցեղասպանութեան երկրորդ փուլ»:

Խօսելով հայերէն, Գեորգեան ըսաւ, թէ իր ուսումնասիրութեան նիւթը հիմնուած է վերապրողներու վկայութիւններուն՝ մանաւանդ Արամ Անտոնեանի հաւաքածներուն, ինչպէս նաեւ Գերմանիոյ, Աստրիա-Հունգարիոյ եւ ԱՄՆի Մոսուլի, Հալեպի, Դամասկոսի եւ Երուսաղէմի հիւպատոսական տեղեկագիրներուն վրայ: Ան նաեւ օգտուած է օսմանեան վարչապետարանի արխիւին հրատարակուած նիւթերէն: Գեորգեան ըսաւ, թէ վերոյիշեալ նիւթերը կ'ամբողջացնեն զիրար եւ կը հերքեն թրքական այն տեսակետը, թէ հայ տարագրեալներու «վերաբնակեցումը» չէր միտեր վերջիններու ոչընչացումը:

Գեորգեան հայոց ցեղասպանութիւնը, տարագրութեան եւ ջարդերու առումով բաժնեց իրարմէ տարբեր երկու գլխաւոր փուլերու: Առաջին փուլին՝ մինչեւ տարագիրներուն Հալեպ հասնիլը, տեղահանութիւնը, սպանութիւններն ու բռնագողթը կը վերահսկուէին այսպէս կոչուած Յատուկ Կազմակերպութեան կողմէ:

Այս փուլին, զոյութիւն ունէին տարագրութեան երեք առանցքներ, ըսաւ Գեորգեան: Առաջին առանցքը, Էրզրումէն, Երզնկայէն, Տրապիզոնէն, Սվազէն, Սամսոնէն, Մարգուանէն, Ամասիայէն եւ Մալաթիայէն տեղահանուած մօտաւորապէս 200,000 հայերու համար էր: Երկրորդը կը վերաբերէր Տիարպէքիէն, Պիթիսէն եւ Վանէն տեղահանուած մօտ 435,000 հայերու: Պատմական Հայաստանէն տեղահանուած այս հայերուն միայն 15-20 առ հարիւրը հասաւ Հալեպ. մնացեալը մահացան կամ սպանուեցան ճանապարհին:

Կայսրութեան արեւմտեան նահանգներէն՝ Թրակիա, Իզմիր, Պուրսա, Քէօքահիա, Գոնիա, Քասթամունու, Անգարա եւն., մօտաւորապէս 300,000 հայեր, քիչ ժամանակ անց, նոյնպէս ենթարկուեցան իրենց հայրենակիցներու ճակատագրին: Այս մէկը տարագրութեան երրորդ առանցքն էր: Անոնց տարագրումը սկսաւ 1915ի Յունիսին եւ շարունակուեցաւ ամբողջ ամառը: Այս խումբին մէջ կային նաեւ Պոլիսէն մօտ 40,000 հայեր, գլխաւորաբար՝ պանդուխտներ եւ ամուրի երիտասարդներ: Այս տարագրեալներէն ունեւորները մինչեւ Պոզանթի ճամբորդեցին շոգեկառով եւ ասոնց մօտ 90 առ հարիւր կրցաւ Հալէպ հասնիլ:



*Ռեւման Գէորգեան կը դասախօսէ Հայկազեան Համալսարանի մէջ*

Գէորգեան տեսցուց, որ այս փուլին, Կիլիկիայէն տարագրուած 310,000 հայերը եւս քիչ գոհեր առին, չհաշուած անոնք, որոնք ջարդուեցան իրենց հայրենի քաղաքներուն մէջ, ինչպէս զէյթունցիք եւ տէօթ-եւլցիք: Ընդհանուր հաշուով, Օսմանեան Կայսրութեան բոլոր շրջաններէն, Հալէպ հասան մօտաւորապէս 870,000 հայեր:

Յեղասպանութեան երկրորդ փուլը, որ տեսեց Մեպտեմբեր 1915էն մինչեւ Դեկտեմբեր 1916, գործադրուեցաւ Հիսիսային Սուրիոյ եւ Միջագետքի համակեդրոնացման կայաններուն մէջ, ուր տարագիրները գոհ զացին կտորածներու, կամ ալ մահացան յարակից պատճառներէ՝ անօթութիւն, հիւանդութիւն, եւն.: Այս փուլը առայժմ անտեսուած կը մնայ գիտութեան մէջ, հակառակ որ այս շրջանին մահացաւ ցեղասպանութեան ամբողջ տնտղութեան գոհուած տարագրեալներու թիւին կէսը:

Մեպտեմբեր 1915ին, օսմանեան կառավարութիւնը, վերահսկելու համար այս փուլի գործադրումը, Հալէպի մէջ ստեղծեց Տարագրեալներու Ենթատեսչութիւն մը: Այս Ենթատեսչութիւնը պաշտօնապէս կապուած էր Յեղախումբերու եւ Տարագրեալներու Տեսչութեան: Մեպտեմբեր 1915էն սկսեալ, Ենթատեսչութիւնը հիմնեց կայաններ Մամուրայի, Ինթիլիի, Իսլահիյի, եւ Քարմայի մէջ՝ դէպի Հալէպ տարագրութեան ճամբուն վրայ: Իւրա-

քանչիւր կայան ունէր իր տնօրէնը, որ կը նշանակուէր Հալէպէն, եւ 5-10 հոգինոց պաշտօնէութիւն: Ասոնց նպատակն էր հսկել կայաններուն վրայ, օգնութեամբ մի քանի հայերու, որոնք կ'ընտրուէին ամէնէն աղքատ տարագրեալներէն, շատ հաւանաբար անոնց միջեւ դասակարգային լարուածութիւն յառաջացնելու համար: Անշուշտ կային նաեւ մեռելահաւաքները: Տարագրեալները այստեղ կը մնային 10-15 օր, մինչեւ դրկուէին յաջորդ կայանը, դէպի հիւսիսային Սուրիոյ եւ Միջագետքի անապատները իրենց ճամբուն վրայ:

Հարիր հազարաւոր տարագիրներ մահացան այս կայաններուն մէջ: 10,000 հոգի մահացաւ Պոզանքիի մէջ 1915ի ամբան ընթացքին. 40,000՝ Մամուրայի մէջ, մինչեւ Հոկտեմբեր 1915՝ կայանին փակումը. 60,000՝ Իսլահիյէի մէջ մինչեւ 1916ի սկիզբը. 60,000՝ Ռաճայի, Քաթմայի եւ Ազէզի մէջ. 50-60,000՝ Ախթերիմի եւ Պապի մէջ, Հոկտեմբեր 1915էն Ապրիլ 1916. 50,000՝ Լալի եւ Թէֆրիճէի մէջ, Գեկտեմբեր 1915էն Փետրուար 1916: 30,000 հայեր Ամանոսի լեռներուն մէջ փապուղիներ փորեցին, ապա սպանուեցան Յունիս 1916ին: Քահանաներու եւ այլ հոգեւորականներու համար յատուկ կայան մը հիմնուեցաւ Մեմլիճի մէջ՝ Օզոստոս 1915էն Փետրուար 1916:

Պատերազմէն առաջ Հալէպ հաստատուած հայերը չենթարկուեցան տեղահանութեան: Ընդհակառակը, անոնք օգնեցին տարագիրներուն: Գեորգեան առանձնացուց Արմէն եւ Գրիգոր Մազումեան եղբայրները, նշանաւոր «Օթէլ Պարոն»ի տէրերը, որոնք օգտուելով Սուրիոյ կառավարիչ Անմէտ Դեմալ Փաշայի հետ իրենց մօտ ծանօթութենէն, կրցան որոշ օգուակարութիւն ունենալ տարագիրներուն:

Հալէպ հասնելէ ետք, տարագիրներուն մեծ մասը շարունակեց իր մահուան ճամբան երեք ուղղութիւններով: Անոնցմէ ամէնէն արիւնալին Եփրատի երկայնքով էր, ուր միայն 1916ի երկրորդ կիսուն 196,000 հայեր քնաջնջուեցան Սալիհ Զէքի Պէյի հսկողութեամբ՝ Ռաս-իւլ-Այն գիւղէն մի քանի հարիր չէնէն գիւղացիներու կողմէ: Տիարպէքիլէն եւ յարակից շրջաններէն տարագրուածները շարունակեցին իրենց ճամբան մինչեւ Ռաս-իւլ-Այն, Մոսուլ եւ անդին: Անոնց մեծամասութիւնը քնաջնջուեցաւ Խապուրի շրջանին մէջ, մանաւանդ Էլ-Հասաքէ գիւղին շուրջ:

Կիլիկիայէն տարագրուածները Համա-Հոմս ուղիով շարունակեցին իրենց ճամբան մինչեւ Կարմիր Ծովու հիւսիսային ափերը: Յարաբերաբար քիչ մարդիկ գոհուեցան այս ճամբուն վրայ. մահուան զլխաւոր պատճառը սովն էր: Տարագրման կայաններու փոխարէն, այս գծով տարագրուածները տեղատրուեցան գիւղերու մէջ, մանաւանդ Քարաքի մօտ եւ Հաուրանի մէջ: Ըստ Գեորգեանի, Դեմալ Փաշայի վարած այս մեղմ քաղաքականութեան պատճառը կրնայ ըլլալ այն, որ ան՝ դաշնակցական գործիչ Իւան Զավրիեւի միջոցով, զաղտնի քանակցութիւններու մէջ էր Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ հետ: Գեորգեան հետեցուց, որ կարելի էր եւս 250,000 հայերու կեանքը փրկել, եթէ այս քանակցութիւնները յաջողէին, եւ Դեմալ ապստամբէր Պոլսոյ իր կուսակիցներուն դէմ:

«Հայ-Ատրպեյճանական Հակամարտութիւնը Տարածաշրջանային,  
Ռազմական եւ Աշխարհա-Ռազմավարական Չարգացումներու Ընդմէջէն»  
դասախօս` Հրաչ Չիլինկիրեան  
11 Դեկտեմբեր 2001

1700ամեակի շարքին մէջ իր տուած դասախօսութեան անոնքեր, Հրաչ Չիլինկիրեան Հայկազեան Համալսարանի մէջ տուաւ նաեւ երկրորդ դասախօսութիւն մը՝ հայ-ատրպեյճանական հակամարտութեան մասին:

Չիլինկիրեան նաեւ հարաւային Կովկասի հարցերով վերլուծաբան է, եւ ներկայիս կ'ուսումնասիրէ նախկին խորհրդային ինքնավարութիւնները, ինչպէս Լեռնային Ղարաբաղը, Արխազիան, Հարաւային Օսեթիան եւ շրջանի այլ չլուծուած հակամարտութիւնները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, որ սկսաւ 1988ին, հնագոյն չլուծուած տարածքային հակամարտութիւնն է նախկին Խորհրդային Միութեան տարածքին: Նախորդ քանի մը տարիներուն, անիկա յատկապէս արեւմտեան շրջանակներու կողմէ կը դիտուի իբր հայ-ատրպեյճանական հակամարտութիւն, մանաւանդ Ռուպերթ Քոչարեանի Հայաստանի նախագահ ընտրութենէն ետք: Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը աշխարհի աւելի քան իննսուն միջ-ցեղային եւ միջ-սահմանային հակամարտութիւններէն մէկն է:

Լեռնային Ղարաբաղը կը գտնուի երեւակայական եռանկիւնի մը մէջ, որուն մէկ անկիւնը Ղազախտանի Թենկիզ քարիղի ետերն է, միւսը՝ Պարսից Ծոցի մուտքը հանդիսացող Հորմուզի նեղուցը, իսկ երրորդը՝ Պոսֆորի նեղուցը: Այսինքն՝ Ղարաբաղ կը գտնուի համաշխարհային առումով կարեւոր նկատուող ուժանիւքային եւ ռազմավարական հետաքրքրութիւններ յառաջացուցած տարածաշրջանի մը մէջ: Այս եռանկիւնը կը պարփակէ նաեւ այլ շարունակուող հակամարտութիւններ, ինչպէս արար-խորայլեանը, յոյն-թրքականը, հնդկա-փարսիստանեանը, ինչպէս նաեւ Իրաքի, Աֆղանիստանի, Կեղոնական Ասիոյ մէջ Ֆերդանա Հովիտի խնդիրները եւն.: Աւելին. Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, Կովկասը, որ կ'իյնայ այս եռանկիւնին մէջ, բնահարթակ դարձաւ յաճախ բռուն եւ արհմալի բախումներու, ինչպէս Արխազիոյ, Հարաւային Օսեթիոյ եւ Չեչնիոյ պարագային: Նուազ վտանգատր հակամարտութիւններ կան Աճարիոյ մէջ, ինչպէս նաեւ հայերու եւ վրացիներու միջեւ՝ Չաւախքի հարցով, օսեթներու եւ ինգուշներու միջեւ, լեզգիներու խնդիրը՝ Տաղստանի եւ Ատրպեյճանի միջեւ եւն.:

Կովկասը, շեշտեց Չիլինկիրեան, շատ կարեւոր է Կասպից Ծովէն քարիղի եւ բնական կազմի արտադրութեան յետագայ զարգացման, մանաւանդ՝ անոնց դէպի արեւմտեան շուկաները փոխադրութեան համար: Այս մէկը յստակ կ'երեւի քարիղատար եւ կազատար խողովակներու վրայ վերահսկողութիւն ձեռք ձգելու, կամ նորերը կառուցանելու իրար հակադիր միջազգային քաղաքական շահերու եւ ձգտումներուն մէջ:

ԱՄՆը եւ արեւմտեան Եւրոպան գործօն մասնակիցներ են շրջանային այս պայքարներուն մէջ, մինչ Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը կը մնան շրջանի գլխատր երեք դերակատարները: Կասպեանի ափերուն միտ

երկիրներն այլ ունին իրենց շահագրգռությունները, եւ այսպիսով այս հակամարտությունները երբեմն կը ստանան երկկողմ, նոյնիսկ բազմակողմ բնոյթ:

Չիլիեկիրեան նշեց, որ ԱՄՆը եւ Եւրոպան, այս տարածաշրջանը կը դիտեն ոչ թէ իբրեւ շարք մը անջատ հակամարտություններու քառերաբեմ, այլ իբր միասնական աշխարհա-քաղաքական միաւոր: Շրջանը իբր մէկ ամբողջութիւն դիտելով, արեւմտեան դիւանագիտական ջանքերն ու խաղաղութիւն հաստատելու առաջարկները, կը միտին գտնել համընդհանուր լուծման տարրերակ մը: Շրջանային ոյժերու այս տեսակետը կը բախի շրջանային երկիրներու աւելի անհատապաշտ մօտեցումներուն հետ:

Խնդրին էութիւնը, նշեց Չիլիեկիրեան, 1920ին խորհրդային իշխանութեան կողմէ Լեոնային Ղարաբաղին անուանական ինքնավարութիւն շնորհելով, զայն Ատրպէյճանի մէջ ընդգրկելու որոշման սրբագրումն է: Խորհրդային այդ քայլը ինքնին ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը եւ երկիրներու տարածքային ամբողջականութիւնը ընդունող միջազգային չափանիշներուն հակասութեան դասական դրսեւորում էր: Խորհրդային Միութեան փլուզումով, Լեոնային Ղարաբաղ հռչակեց իր անկախութիւնը: Հայ-ատրպէյճանական պատերազմը շարունակուեցաւ մինչեւ 1994ի զինադադարը: Հայեր այսօր կը վերահսկեն Ատրպէյճանի տարածքին 14-15 առ հարիւրին վրայ, ներառեալ Ղարաբաղի գրեթէ ամբողջ տարածքը: Երկու կողմէն կան հարիւր հազարաւոր գաղթականներ:

Հակամարտութեան լուծման խնդրով կը զբաղի Եւրոպայի Մէջ Անվտանգութեան Եւ Համագործակցութեան Կազմակերպութեան Մինսքի խումբը, որ կ'ընդգրկէ 11 պետություններու ներկայացուցիչներ՝ Ռուսաստանի, ԱՄՆի եւ Ֆրանսայի համանախագահութեամբ: Հակառակ բոլոր ճիգերուն եւ Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն ունեցած շուրջ քսան հանդիպումներուն, խնդիրը դեռ կը մնայ չլուծուած: Գլխաւոր տարակարծութիւնը Ղարաբաղի յետագայ կարգավիճակի հարցն է: Այլ փշոտ հարցեր են Ղարաբաղէն դուրս գտնուող եւ հայկական վերահսկողութեան տակ գտնուող ատրպէյճանական հողերու վերադարձը, գաղթականներու տունդարձը, Ղարաբաղի անվտանգութիւնը ապահովող միջազգային երաշխիքները եւն.:

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարը յաճախ կը յիշատակէ «փարիզեան սկզբունքները», որոնց մասին ենթադրեալ համաձայնութիւն մը կայացած է 2001ի սկզբնաւորութեան երկու երկիրներու նախագահներուն միջեւ: Այդ «սկզբունքները» յստակօրէն չեն պարզաբանուած, սակայն կ'ենթադրուի որ նախագահները համաձայնած ըլլան Ղարաբաղի եւ Ատրպէյճանի միջեւ «ժողովրդական յարաբերութիւններու» հաստատման, Ղարաբաղն ու Հայաստանը իրար կապող ցամաքային միջանցքի մը ստեղծման, եւ Ղարաբաղի ապահովութիւնը երաշխաւորող միջազգային ամուր երաշխիքներու ձեռքբերման կապակցութեամբ: Հայաստան կը պնդէ, որ այս սկզբունքները քանակցութեան ենթակայ չեն: Ակնյայտ է, որ Ատրպէյճան իր հերթին, պիտի վերստանայ Ղարաբաղէն բացի հայկական հսկողութեան տակ գտնուող միւս տարածքները, գաղթականներու տունդարձը պիտի ապահովուի, եւ Մեղրիի տարածքով դէպի Նախիջեւան անցք մը պիտի ապահովուի: Դասախօսին տեսակէտով, այս վերջինը պիտի ըլլայ ոչ այլ ինչ, քան խորհրդային օրերուն եղած իրավիճակին վերականգնումը:

Ո՛չ մէկ հայաստանցի ղեկավար կրնայ Հայաստանի տարածքէն մաս մը գիշիլ Ատրպէյճանին, եւ այդպիսով Իրանի հետ սահմանային կապէն հրաժարիլ, ըստ Չիլինկիրեան:

Ապրիլ 2001էն ի վեր, ազերի պաշտօնատարներ կը հերքեն այս «սկզբունքներու» գոյութիւնը, այդպիսով փաստօրէն ստեղծելով բանակցութիւններու գործընթացը: Հետզհետէ կը լսուին տարածքները ոյժով վերադարձնելու մասին կոչեր: Աւելին, ԱՄՆ-ի մէջ 11 Սեպտեմբեր 2001ի ահաբեկչական արարքէն ետք, ազերի պետական պաշտօնատարներ, ընդդիմադրութեան ղեկավարներ, հոգեւոր առաջնորդներ, ակադեմականներ եւ լրատուամիջոցներ կազմակերպուած աշխատանք կը տանին Հայաստանը իբր ահաբեկիչ ամբաստանելու, եւ ամբողջ աշխարհին համար վտանգ մը ներկայացնելու գծով: Ըստ Չիլինկիրեանի, այս յարձակումները կը միտին արդարացնել Պաքուի ներկայ վարչակարգին վարած քաղաքականութիւնը: Ասիկա յար եւ նման է Չեչնիոյ դէմ ոռոսերուն, Կեղոնական Ասիոյ կարգ մը բռնատիրական երկիրներուն եւ որոշ չափով ալ վրացիներուն վարած քաղաքականութեան, որոնք Սեպտեմբեր 11էն ետք ստեղծուած համաշխարհային կացութիւնը կը փորձեն օգտագործել, որպէսզի ազատօրէն կարենան ճնշել իրենց հակառակորդներուն վրայ, յուսալով, որ արեւմտեան հանրային կարծիքը արդէն հասկացողութեամբ կը վերաբերի այդ քայլերուն:

Հարց-պատասխանի բաժնին մէջ, Չիլինկիրեան անդրադարձաւ հայատրպէյճանական հակամարտութեան առնչուած շարք մը այլ խնդիրներու: Ան ըստ, թէ Ղարաբաղը Ատրպէյճանի կազմին մէջ ձգող որեւէ յետագայ բանակցութիւն, լուծում չի բերեր խնդրին, որովհետեւ Ղարաբաղի հայերը ուր տասնամեակ շարունակ անընդունելի գտած են այդպիսի կարգադրութիւններ: Ան ստելցուց, թէ «ընդհանուր պետութեան» վարկածը, որ առաջարկուած է Մինսքի խումբին կողմէ, իսկութեան մէջ փոխ-գիշումնային քայլ մըն է նախկին խորհրդային ինքնավարութիւններուն անկախութիւն շնորհելու իրենց չկամութեան եւ Ղարաբաղի ժողովուրդին անկախ ապրելու ձգտումին միջեւ: Ո՛չ որ գիտէ այս վարկածին բուն էութիւնը: Չիլինկիրեան անհաւանական նկատեց, որ Ատրպէյճան վերսկսի պատերազմական գործողութիւնները: Այդպիսի արարք մը պիտի բախի արեւմուտքի դիմադրութեան: Հայերը վարկարեկելու եւ իբր ահաբեկիչ ամբաստանելու փորձերը ազերիներէն առաջ թուրքերը կիրարկած են քիւրտերուն նկատմամբ: Նոյն թուրքերը կրնան քաջալերած ըլլալ ազերիներու նման փորձերը, եզրակացուց Չիլինկիրեան:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲՈՂՆԻ  
45ԱՄԵԱԿԻ ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԸՆՈՐՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՄԻ Ի. ՀԱՏՈՐԻ

Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնը Ուրբաթ, 27 Ապրիլ 2001ին, յատուկ հանդիսութեամբ նշեց իր հիմնադրութեան 45րդ տարեդարձը. նոյն առեւ տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանգժի Ի. հատորի շնորհանդէսը:

Երեկոյի պատուոյ հիւրերն էին ամբիոնի Լիբանան բնակող նախկին ու ներկայ դասախօսները: Յոռնկայս լուրեամբ յարգուեցաւ ամբիոնի հիմնադիր եւ առաջին վարիչ Վեր. Տիգրան Խրոբեանի, ինչպէս նաեւ մահացած այլ դասախօսներուն յիշատակը: Ներկայ էին նաեւ համալսարանի Խնամակալ Մարմինի կարգ մը անդամներ, որոնք իրենց հերթական ժողովին համար կը գտնուէին Լիբանան:

Օրուան հանդիսավարն էր *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* խմբագրական կազմի անդամ Անդրանիկ Տազէտեան:

Ամբիոնի ներկայ վարիչը՝ Արա Սանճեան, արտայայտուեցաւ ամբիոնի դիմագրաւած կարգ մը ներկայ մարտահրաւերներուն մասին: Ան ըսաւ, թէ աշխատանք գտնելու դժուարութեան եւ նիւթական ցած վարձատրութեան պատճառով, հայագիտութիւնը դարձած է անհրապոյր ասպարէզ մը բոլոր այն լիբանանահայ երիտասարդներուն համար, որոնք առիթը ունին պետականօրէն ճանչցուած համալսարան մը ընդունուելու: Ան նշեց նաեւ, որ հայ ուսանողներուն համար իբր պարտադիր դասընթացք տրուող հայագիտական նիւթերն ալ կարիքը ունին որոշ վերափոխութեան: Այդ նիւթերը՝ Հայաստանի վերանկախացման եւ սփիւռքահայ կառոյցներու պաշտօնականացման լոյսին տակ, յետ այսորիկ պէտք է աւելի շատ արժարժեն սփիւռքահայ երիտասարդութիւնը հետաքրքրող այժմեական հարցեր: Տեղաբնակ հայ մասնագէտներու եւ անհրաժեշտ գրականութեան պակասը կը դժուարացնէ այդ առնչութեամբ կատարուած փորձերը: Աւելին, հայախօսութեան մակարդակի անկումով արդէն կը ծագի այն հարցումը, թէ հայերէնով թէ՞ անգլերէնով պէտք է ըլլան հայ մշակոյթի ու պատմութեան դասաւանդութիւնները: Սանճեան կոչ ուղղեց ներկաներուն եւ լիբանանահայ կազմակերպութիւններուն, համագործակցելու Հայկազեան Համալսարանի հետ, այս դժուարութիւններուն գոնէ մէկ մասը լուծելու համար:

Սանճեանի խօսքէն ետք, Տազէտեան ընթերցեց ամբիոնի 1971-72 տարեշրջանի վարիչ Տիգրան Գոյումճեանի շնորհատրական գիրը: Փրոֆ. Գոյումճեան ներկայիս Քալիֆորնիոյ Պետական Համալսարանի Ֆրեզնոյի մասնաճիւղին հայագիտական ուսմանց ծրագրին պատասխանատուն է:

*Հայկազեան Հայագիտական Հանդէսի* պատասխանատու խմբագիր Հ. Անդրանիկ Վրդ. Կոանեան ներկայացուց *Հանդէսի* մօտաւորապէս երեսուն տարուան պատմութիւնը, սկսելով Երուանդ Քասունիի խմբագրած առաջին տասն հատորներէն: Ան նաեւ բացատրեց, թէ ինչ պայմաններու տակ ինք ստանձեց *Հանդէսի* խմբագրութիւնը՝ մօտ տասն տարի առաջ: Ապա, Կոանեան ներկայացուց այդ տասն տարիներու ձեռքբերումները, թէ ինչպէս խմբագրումը վերածուած է հաւաքական աշխատանքի, եւ ապահովուած են *Հանդէսին* տարեկան կանոնաւոր հրատարակութիւնն ու անոր գիտական մակարդակին աստիճանական բարելաւումը: Կոանեան յայտնեց, թէ համալսարանի ղեկավարութիւնն ու խմբագրական կազմը միասնաբար, կազմած են ներքին կանոնագիր մը: Աւելին, այս տարուրնէ սկսեալ պիտի գործէ Խորհրդատուներու Մարմին մը, եւ *Հանդէսը* պիտի ունենայ իր ներկայացուցիչը Հայաստանի մէջ: Հայր Անդրանիկ խոստացաւ, որ *Հանդէսը* պիտի հրատարակուի այնքան ատեն, որ գործէ Հայկազեան Համալսարանը:

*Հանդէսի* հերթական հատորի բովանդակութիւնը ներկայացուց եւ վերլուծեց Երեւանի Պետական Համալսարանէն Փրոֆ. Երուի Խաչատրեան, որ

ժամանակատրապէս կը գտնուէր Պէյրութ, իբր դասախօս Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի:

Համալսարանի հոգաբարձութեան գնահատանքի խօսքը փոխանցեց Վեր. Ռոպեր Սարգիսեան:

Երեկոն շարունակուեցաւ յորելեանին առփի պատրաստուած հիւրասիրութեամբ:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԷՄԻ Ի. ՀԱՏՈՐԻ  
ԸՆՈՐՀԱՆԴԷՍԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի. հատորը հայրենի հանրութեան ներկայացուցեցաւ 26 Յուլիս 2001ին, Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանին մէջ, հայրենի հայագիտական կեդրոններու ներկայացուցիչներու, այլ անհատ հայագէտներու, Հանդէսի բարեկամներու եւ լրատուամիջոցներու ներկայութեան:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Արծուի Բախչինեան, Հայկազեան Հայագիտական Հանդէսի նորանշանակ ներկայացուցիչը Հայաստանի մէջ, որ հանդիպման նպատակը ներկայացնելէ ետք, հրաւիրեց Երեւանի Պետական Համալսարանի դասախօս՝ պատմաբան Պետրոս Յովհաննիսեանը, որ ներկայացուց Հանդէսի անցած ուղին, մեծապէս գնահատելով անոր տեղն ու դերը հայագիտութեան ծառայութեան մէջ:

Յաջորդ խօսք առնողն էր Գեորգ Տէր-Վարդանեան՝ Մատենադարանէն, որ Պէյրութ այցելութեան ընթացքին Հանդէսի խմբագրութեան հետ իր ունեցած հանդիպումներուն մասին խօսեցաւ, ներկայացնելով եւ գնահատելով Հանդէսի կանոնադրաբար լոյս ընծայման պայմանները, մանաւանդ վերջին տասը տարիներուն, եւ յաջողութիւն ու յարատեւութիւն մաղթեց Հանդէսի խմբագիրներուն եւ առնչակից բոլոր անձերուն:

Հանդէսի խմբագրութեան անունով խօսք առաւ յատկապէս Պէյրութէն ժամանած Անդրանիկ Տազետեան: Ան համառօտակի ներկայացուց Հանդէսի պատմականը, եւ տեղեակ պահեց ներկաները երկու որոշումներու մասին, որոնք Հանդէսի գիտական որակն ու հրատարակութեան գործընթացը բարելաւելու կը միտին.-

ա) Ստեղծուած է խմբագրական կազմին կից Խորհրդատուներու Մարմին մը, բաղկացած Սեդա Պ. Տատոյեանէ, Միլվա Աճեմեանէ, Ժիրայր Դանիէլեանէ, Սկրտիչ Յ.Պուլտուբեանէ, Պերճ Ֆազլեանէ, Երուանդ Երկանեանէ (Լիբանան), Հրանոյշ Խառատեանէ, Մուրադ Հասրաթեանէ (Հայաստան), Սիւզըն Փեթիէ եւ Հրաչ Չիլինկիրեանէ (Անգլիա):

բ) Արծուի Բախչինեան նշանակուած է իբր Հանդէսի պաշտօնական ներկայացուցիչը Երեւանի մէջ:

Տազետեան իր խօսքին մէջ նշեց, թէ Հանդէսի խմբագրութիւնը հայագիտութիւն հասկացողութեան տակ կը տեսնէ անոր դասական նշանակութենէն աւելին. հայագիտութիւնը կ'ընդգրկէ հայոց անցեալին, ներկային եւ ապագային առնչուած բոլոր մարզերը: Խմբագրութիւնը կը քաջալերէ երիտասարդ յօդուածագիրներու աշխատանքները, պահելով հրատարակութեան գլխաւոր երկու պայմանները՝ յօդուածին բարձր գիտական մակարդակն ու նախապէս հրատարակուած չլլալը: Տազետեան կոչ ուղղեց

ներկաներուն համագործակցելու Հանդէսին հետ, զարկ տալու համար հայագիտութեան զարգացման:

Երոյքներ ունեցան Հենրիկ Բախչինեան, Բախտիար Յովակիմեան, Պաւլ Ծօպանեան եւ ուրիշներ, որոնք արտայայտեցին իրենց նկատողութիւններն ու փափաքները: Զրոյցները յետագային շարունակուեցան պատշաճ հիւրասիրութեան մը ընթացքին:

Երեւան իր կեցութեան շրջանին, Տազէսեան նաեւ հանդիպումներ ունեցաւ Հայաստանի Ազգային Ակադեմիայի, Ազգային Գրապարտի, Երեւանի Պետական Համալսարանի, «Սփիւռք» կեդրոնի եւ այլ եիմնարկներու ղեկավարութեանց հետ, զարգացնելու համար Հանդէսի կապերը Հայաստանի հայագիտական կեդրոններուն հետ:

Հանդէսի շնորհանդէսը աննախընթաց ձեռնարկ մըն էր, որ մեծապէս օգտակար հանդիսացաւ Հանդէսին հայրենի հայազէտներու ու հայագիտական կեդրոններու միջեւ կապերու ամրապնդումին: